ԱՎԱՆԴԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԺԱՌԻԹ • ՆՊԱՏԱԿ • ԱԿՆԿԱԼԻՔ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ



17-18 ՆՈՅԵՄԲԵՐ NOVEMBER 2026

TRADITIONAL EPIGRAPHY

OCCASION • PURPOSE • EXPECTATION

ABSTRACTS

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

HISTORY MUSEUM OF ARMENIA

ՀՏԴ 930.2:94(479.25)(082)
ԳՄԴ 63.2+63.3(5Հ)գ43
Ա 774

Հրատարակության պատրաստեց՝ Արսեն Հարությունյան
պատմական գիտ. դոկտոր

Ա 774 Ավանդական վիմագրություն. շարժառիթ, նպատակ, ակնկալիք: Զեկուցումների դրույթներ (17-18 նոյեմբերի, 2026 թ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստանի գինու պատմության թանգարան) / հրատարակության պատրաստեց՝ Ա. Հարությունյան.- Եր.: ՀԱԻ հրատ., 2026.- 47 էջ:

Ժողովածուն ամփոփում է վիմագրագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումների հայերեն և անգլերեն համառոտ դրույթները: Զեկուցումների առանցքում Հայկական լեռնաշխարհում և նրա սահմաններից դուրս Վանի թագավորության ժամանակաշրջանից ի վեր վիմագիր կազմելու առանձնահատկությունները լուսաբանելն է: Առանձնակի ուշադրության են արժանացել վիմագրական վերապրուկներին, կառուցատիպերին, լեզվաբանական, քերականական խնդիրներին, վերականգման առանձնահատկություններին և այլ յուրօրինակ դրսևորումներին նվիրված հարցերը:

Գիտաժողովը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրով իրականացվող «Վիմագրման ավանդույթը Հայկական լեռնաշխարհում. Վանի թագավորությունից մինչև ուշ միջնադար» (24SSAH-6A011) նախագծի շրջանակում:

ՀՏԴ 930.2:94(479.25)(082)
ԳՄԴ 63.2+63.3(5Հ)գ43

ISBN 978-9939-495-00-2

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ / CONTENTS

7 **Վահե Սարգսյան**
Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՎԱՐԹՆՈՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Vahe Sargsyan
K. F. LEHMANN-HAUPT'S RESEARCH ON THE ZVARTNOTS INSCRIPTION

8 **Նանա Մարգարյան**
ԲԻԼԳԱՄԵՇ / ԳԻԼԳԱՄԵՇ ԷՊՈՍԻ ՍԵՊԱԳՐԵՐՆ ԻԲՐԵՎ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱԼԵՏ-ՕՊԵՐԱՅԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Nana Margaryan
THE CUNEIFORMS OF THE BILGAMESH / GILGAMESH EPIC AS THE PRIMARY SOURCE FOR THE EPONYMOUS BALLET-OPERA

10 **Հայկ Գյուլամիրյան**
ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Hayk Gyulamiryan
CLASSICAL ARMENIA IN THE EPIGRAPHIC CONTEXT OF THE ANCIENT WORLD

12 **Հելեն Գիունաշվիլի**
ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՆ ԳԵՄՄԱՆԵՐԻ ՎՐԱ ՎԿԱՅՎԱԾ ՄԻՋԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ (2-3-ՐԴ ԴԴ.)

Helen Giunashvili
MIDDLE IRANIAN NAMES ON THE ANCIENT GLYPTIC ARTEFACTS AT THE NATIONAL MUSEUM OF GEORGIA (2ND-3RD CENTURIES AD)

14 **Կարեն Թոխաթյան**
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Karen Tokhatyan
THE MANIFESTATIONS OF THE PETROGLYPHIC TRADITION IN MEDIEVAL MONUMENTS

17 **Արսեն Հարությունյան**
ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Arsen Harutyunyan
THE MANIFESTATIONS OF PUNCTUATION IN THE CONTEXT OF TRADITIONAL ARMENIAN EPIGRAPHY

19 **Լուսինե Հակոբյան**
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԻՄԱԳՐԵՐԻ ԳՐԻՉ-ՎԱՐՊԵՏԸ

Lusine Hakobyan
THE MASTER-SCRIBE OF ARMENIAN MEDIEVAL INSCRIPTIONS

21 **Գայանե Հովհաննիսյան, Համեստ Թամրազյան**
ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎՈՒՄՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԽԻՎ. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ 1641–1917 ԹԹ. ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Gayane Hovhannisyan, Hamest Tamrazyan
THE EPIGRAPHIC FORMULARY AS A POLITICAL ARCHIVE: ARMENIAN INSCRIPTIONS IN INDIA, 1641–1917

23 **Միքայել Բադալյան**
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԷՋԵՐԸ

Mikayel Badalyan
THE CUNEIFORM PAGES OF YEREVAN'S WRITTEN HISTORY

26 **Սուսաննա Ադամյան**
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ. ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՐՁԱՆ»-Ի ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Susanna Adamyan
HRACHYA ACHARIAN: EPIGRAPHIC OBSERVATIONS IN THE CONTEXT OF "HAYARDZAN"

28 **Սաթենիկ Խուրշուդյան**
ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆ. ԱԽՏԱՑՈՒՅՑ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏԱՔՈՏՈՂԸ

Satenik Khurshudyan
VAHRAM TORGOMYAN: THE RESEARCHER OF EPIDEMIC-RELATED EPITAPHS

29 **Արփինե Ավետիսյան, Շահան Վիդալ-Գորեն, Վիկտորյա Խուրշուդյան, Պոլետ Սամվելյան**
ԱՐՑԱԽԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՍՏԵՂԾՈՒՄ. ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Arpine Avetisyan, Chahan Vidal-Gorène, Victoria Khurshudyan, Pollet Samvelian
BUILDING A DIGITAL CORPUS OF ARTSAKH INSCRIPTIONS: THE MARTAKERT REGION AS A CASE STUDY

32 **Համլետ Պետրոսյան, Վիկտորիա Գալստյան**
ԳԻՐԸ, ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԾԵՍԸ. ԱՇՏԱՐԱԿԻ ԾԱԿ ԽԱՉԸ

Hamlet Petrosyan, Viktoria Galstyan
THE INSCRIPTION, THE IMAGE, AND THE RITUAL: THE TS'AK KHACH OF ASHTARAK

33 **Անդրեաս Ռոբի**
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Andreas Rhoby
A MEDIEVAL SOCIETY'S INSCRIPTIONS: THE CASE OF BYZANTIUM

36 **Աշոտ Մանուչարյան**
ԳԻՆՈՒ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Ashot Manucharyan
EVIDENCE OF WINE IN THE INSCRIPTIONS OF ARAGATSOTN

38 **Արմինե Զոհրաբյան**
ԴՐԱՄՆ ԻԲՐԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Armine Zohrabyan
THE COIN AS WRITTEN SOURCE FOR THE HISTORY OF MEDIEVAL ARMENIA

40 **Դիաննա Միրիջանյան, Հայկ Հակոբյան, Արման Նալբանդյան, Տիգրան Ալեքսանյան**
ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻՑ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Dianna Mirijanyan, Hayk Hakobyan, Arman Nalbandyan, Tigran Aleksanyan
NEWLY DISCOVERED EPIGRAPHIC INSCRIPTIONS FROM SPITAK MONASTERY: HISTORICAL AND SOURCE-CRITICAL CONSIDERATIONS

42 **Մհեր Քումունց, Մաթիաս Ֆրից**
ՀԱՏԿԱՆՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Mher Kumunts, Matthias Fritz
PROPER NAMES IN THE EPIGRAPHIC INSCRIPTIONS OF SYUNIK

44 **Մաթիաս Ֆրից**
ՈՐՈՏՆԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Matthias Fritz
LINGUISTIC COMMENTS ON THE INSCRIPTIONS OF VOROTNAVANK

45 **Դավիթ Վարդազարյան**
ՏՈԼՈՐՍԻ ՍԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻՆ. ՋՐԱՍՈՒՅՋ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒՄԸ

Davit Vardazaryan
ST. HRIPSIME CHURCH OF TOLORS:
THE ARCHIVAL DOCUMENTATION OF A SUNKEN MONUMENT

46 Աշխեն Պապոյան
ԿԵՂԱՌԻՍԻ ՎԱՆՔԻ ՍԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ
ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ԵՎ ՆԵՐԿԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ashkhen Papoyan
RESTORATION OF THE MURAL PAINTING AND PAINTED INSCRIPTION
IN THE CHURCH OF ST. GREGORY THE ILLUMINATOR AT KECHARIS MONASTERY

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ABSTRACTS

Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՎԱՐԹՆՈՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վահե Սարգսյան
Պ.գ.թ., Պատմության ինստիտուտ

Գերմանացի ականավոր արևելագետ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը 1902 թ. «Գերմանական արևելագիտական ընկերության հանդեսում» հրատարակեց Զվարթնոցի արձանագրության աղբյուրագիտական քննությանը նվիրված հոդված՝ «Խալդիայի Ռուսա II-ի նորահայտ կոթողի արձանագրությունը» խորագրով: Զվարթնոցից հայտնաբերված Ռուսա Արգիշտորդու (Ք.ա. մոտ 690/680-650/640-ական թթ.) արձանագրության վերաբերյալ Կ. Ֆ. Լեման-Հաուպտն իր հետազոտություններում կատարեց որոշ ուշագրավ դիտարկումներ:

Վիմագրում վկայված և մինչ այդ Կուտուրլինի ընթերցված տեղանունը, Կ. Ֆ. Լեման-Հաուպտը տառադարձում է «qu-ár-li-ni»: Կուարլինի հովիտը Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, ի տարբերություն Կ. Բասմաջյանի և Վ. Բելքի, տեղորոշեց Հրազդան և Քասաղ գետերի միջև ընկած հատվածում: Ըստ հետազոտողի, այստեղ է Ռուսա Արգիշտորդին նաև տնկել խաղողուտ և ոռոգման համար Իլդարունիա գետից անցկացրել Ումեշինի ջրանցքը: Ումեշինի անունը Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ փոխառություն է ասսուրերենից («umâšu» - «ներառում, ընգրկում»), քանզի ուրարտերենում նման համահունչ բառ վկայված չէ:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը Զվարթնոցի արձանագրության «անեծքի բանաձևում» վկայված «ma-si-e ti-ni te-li-i-e» - «իր անունը դնի» ձևակերպումն աղերսում է դեռևս Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114– 1076 թթ.) արձանագրությանը՝ տալով նաև «masi» և «te=le» բառերի նշանակությունը: Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի՝ Զվարթնոցի կոթողի «*անեծքի բանաձևն*» այնքան սերտ է աղերսվում ասորեստանյաններին, որ համադրելի է Քելիշինի և Թոփուզավայի երկլեզու արձանագրություններին: Արդեն 1904 թ. Կ. Ֆ. Լեման-Հաուպտի գործընկեր գերմանացի Վ. Բելքը դարձյալ գերմանական միևնույն հանդեսում ներկայանում է Զվարթնոցի արձանագրությանն առնչվող Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ընթերցումների և տեղորոշումների շուրջ ծավալուն քննադատական հոդվածով:

Վերոհիշյալ երկու աշխատությունները պայմանավորեցին Զվարթնոցի արձանագրությանն առնչվող հաջորդ հետազոտությունները:

K. F. LEHMANN-HAUPT'S RESEARCH ON THE ZVARTNOTS INSCRIPTION

Vahe Sargsyan
PhD in History, Institute of History

The distinguished German orientalist K. F. Lehmann-Haupt in 1902 in the "Journal of the German Oriental Society" published an article devoted to the source-critical examination of the Zvartnots inscription, entitled "The Inscription of the Newly Discovered Monument of Rusa II of Khaldia". In his studies of the inscription of Rusa, son of Argishti (c. 690/680-650/640s BC), discovered in the territory of Zvartnots Cathedral, K. F. Lehmann-Haupt made several noteworthy observations.

The toponym attested in the inscription, which had previously been read as Kuturlini, was transcribed by K. F. Lehmann-Haupt as "qu-ár-li-ni". Unlike K. Basmajyan and W. Belck, K. F. Lehmann-Haupt located the valley of Quarlini in the area between Hrazdan and Kasagh rivers. According to his research, here Rusa, son of Argishti, also planted a vineyard and for its irrigation constructed the Umeshini Canal, drawing water from the Ildarunia River. K. F. Lehmann-Haupt suggested that the name Umeshini was borrowed from Assyrian ("umâšu" – "inclusion, incorporation"), since no corresponding word is attested in the Urartian language.

K. F. Lehmann-Haupt also associated the expression "ma-si-e ti-ni te-li-i-e" ("puts his name"), attested in the "curse formula" of the Zvartnots inscription, with Tiglath-Pileser I's (1114– 1076 BC) inscription, providing interpretations of the words "masi" and "te=le" as well. According to K. F. Lehmann-Haupt, the "curse formula" of the Zvartnots monument bears such a close resemblance to Assyrian formulas that it can be compared with the bilingual inscriptions of Kelishin and Topuzava.In 1904, K. F. Lehmann-Haupt's German colleague, W. Belck, published an extensive critical article in the "Journal of the German Oriental Society", addressing Lehmann-Haupt's readings and geographical interpretations concerning the Zvartnots inscription.

These two publications laid the groundwork for subsequent research on the Zvartnots inscription.

ԲԻԼԳԱՄԵՇ / ԳԻԼԳԱՄԵՇ ԷՊՈՍԻ ՍԵՊԱԳՐԵՐՆ ԻԲՐԵՎ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱԼԵՏ-ՕՊԵՐԱՅԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Նանա Մարգարյան
Արվեստի ինստիտուտի հայցորդ

Վաստակաշատ կոմպոզիտոր, Մոնրեալի համալսարանի դոկտոր Աշոտ Արիյանը մարդկության պատմության մեջ հայտնի հնագույն էպոսի հիման վրա 2009-2012 թթ.

հեղինակել է «Բիլգամեշ» բալետ-օպերան: «Բիլգամեշ» կամ «Գիլգամեշ» էպոս-դյուցազներգությունը Հին Միջագետքի առավել հայտնի գրական հուշարձաններից է, որը գրվել է կավե սալիկների վրա՝ Միջագետքի սեպագիր գրային համակարգով:

Բիլգամեշ / Գիլգամեշը գիտնականների կողմից բնորոշվում է իբրև կիսաառասպելական հերոս, որը նաև իրական, պատմական անձնավորություն է: Նա շումերական Ուրուկ քաղաք-պետության հինգերորդ թագավորն էր և կառավարել է մոտավորապես Ք.ա. 2800-2500 թթ.: Նրա անունը վկայված է շումերական թագավորների հայտնի ցուցակում, ինչպես նաև՝ Թումալի արձանագրության մեջ:

Հատկանշական է, որ էպոսն ու նրանում վկայված շումերական ավանդույթները սերտորեն կապված են նաև Հայկական լեռնաշխարհի հետ, որը հնագույն աստվածների բնակավայրն էր, սրբազան տարածքն ու անմահության երկիրը: Այդ կապը վավերացնող կենտրոնական տարրերից մեկն Արատտա (Aratta) թեոկրատական պետությունն է, որը շումերական սեպագրերում հիշատակվում է դեռևս Ք.ա. III հազարամյակից:

Էպոսի սեպագիր սալիկներում և արդեն նաև բալետ-օպերայի առանցքում խիստ բնութագրական է Բիլգամեշ / Գիլգամեշի և Էնկիդուի արշավը դեպի հյուսիս՝ սրբազան մայրիների (սեդրվաց) անտառ, որի նպատակը հրեշ Հումբաբային (Հուվավա) սպանելն էր: Այդ անտառը պատմականորեն նույնացվում է Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների՝ Տավրոսի լեռների հետ, քանի որ ցածրադիր Շումերում նման անտառներ գոյություն չունեին:

Էնկիդուի մահից հետո Բիլգամեշ / Գիլգամեշը սկսում է անմահության ճանապարհի իր որոնումները, փնտրում համաշխարհային ջրհեղեղից փրկված միակ մարդուն՝ Ուտնապիշտիին (Նոյ, բալետ-օպերայում՝ Զիուսուդրա), որի երկիրը հասնելու համար Գիլգամեշն անցնում է սրբազան Մաշու (Մասիս) լեռներով:

«Բիլգամեշ» բալետ-օպերայի սյուժեն անխուսափելիորեն առնչվում է շումերական դիցաբանության գլխավոր աստվածուհու՝ Իննաննայի (աքքադական Իշտարի) և հայկական դիցաբանության աստվածուհիների հետ՝ արտահայտվելով թե՛ գործառութային նմանություններով, թե՛ ազգային, սեպագիր պատմությունների ընդհանրացումներով:

THE CUNEIFORM TEXTS OF THE BILGAMESH / GILGAMESH EPIC AS THE PRIMARY SOURCE FOR THE EPONYMOUS BALLET-OPERA

Nana Margaryan
PhD Candidate, Institute of Arts

The distinguished composer and Doctor of the University of Montreal, Ashot Ariyan, composed the ballet-opera *Bilgamesh* between 2009 and 2012, based on one of the oldest known epics in human history. The *Epic of Bilgamesh*, or *Gilgamesh*, is one of the most

renowned literary monuments of ancient Mesopotamia. It was inscribed on clay tablets using the cuneiform writing system of Mesopotamia.

Bilgamesh / Gilgamesh is characterized by scholars as a semi-mythical hero who was also a real historical figure. He was the fifth king of the Sumerian city-state of Uruk and is believed to have ruled approximately between 2800 and 2500 BCE. His name is attested in the renowned Sumerian King List, as well as in the Tummal Inscription.

It is noteworthy that the epic and the Sumerian traditions preserved within it are also closely connected with the Armenian Highland, which was regarded as the abode of the ancient gods, a sacred territory, and the land of immortality. One of the central elements attesting to this connection is the theocratic state of Aratta, which is mentioned in Sumerian cuneiform texts as early as the third millennium BCE.

A particularly characteristic element, both in the cuneiform tablets of the epic and at the heart of the ballet-opera, is the expedition of Bilgamesh / Gilgamesh and Enkidu northward to the sacred cedar forest, undertaken with the aim of killing the monster Humbaba (Huwawa). Historically, this forest has been identified with the Taurus Mountains in the southern regions of the Armenian Highland, since no such forests existed in the lowlands of Sumer.

Following Enkidu's death, Bilgamesh / Gilgamesh embarks on a quest for immortality, seeking the sole survivor of the great flood, Utnapishtim (Noah; Ziusudra in the ballet-opera). In order to reach Utnapishtim's land, Gilgamesh crosses the sacred Mount Mashu, identified with Mount Masis (Ararat).

The plot of the ballet-opera *Bilgamesh* inevitably relates to Inanna, the principal goddess of Sumerian mythology (Ishtar in Akkadian mythology), as well as to the goddesses of Armenian mythology. These connections are expressed through both functional similarities and broader parallels among the national traditions and cuneiform narratives of the ancient world.

ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հայկ Գյուլամիրյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Հայաստանի գինու պատմության թանգարան

Անտիկ Հայաստանի վերաբերյալ գրավոր աղբյուրները բացառիկ նշանակություն ունեն ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության և պատմական գործընթացների վերակազմության համար՝ հատկապես, եթե հաշվի ենք առնում տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումները: Միևնույն ժամանակ, ուսումնասիրու-

թյունները պարզում են, որ Հայաստանի և հայերի վերաբերյալ վկայությունները չեն սահմանափակվում Հայկական լեռնաշխարհի տարածքով: Դրանց համադրումը Հայկական լեռնաշխարհից հայտնի վիմագրական ժառանգության և գրավոր այլ աղբյուրների հետ, հնարավորություն է տալիս ձևավորելու անտիկ Հայաստանի պատմության առավել ամբողջական նկարագիրը: Միաժամանակ, Հայաստանի սահմաններից դուրս պահպանված այս «քարեղեն» վկայությունները հնարավորություն են տալիս դիտարկելու նաև Հայաստանը ոչ միայն սեփական պատմական տարածքի շրջանակում, այլև հին աշխարհի ավելի լայն քաղաքական և աշխարհագրական համատեքստում: Դրանք մատնանշում են Հայաստանի ռազմավարական դիրքի, քաղաքական դերակատարության և աշխարհագրական տարածքի նշանակությունը:

Դիտարկելով Հայաստանի և հայերի վերաբերյալ Հայաստանի սահմաններից դուրս պահպանված հունարեն և լատիներեն վիմագրական վկայությունների ընտրանին՝ կարելի է արձանագրել, որ դրանք առանձին և մեկուսացված փաստագրումներ չեն, այլ միասնական վիմագրական համատեքստի ուղղակի բաղադրիչներ: Այդ համադրությունը հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից գնահատելու անտիկ Հայաստանի տեղն ու դերը հին աշխարհի քաղաքական, ռազմական և մշակութային քարտեզում:

CLASSICAL ARMENIA IN THE EPIGRAPHIC CONTEXT OF THE ANCIENT WORLD

Hayk Gyulamiryan
Institute of Archaeology and Ethnography
Wine History Museum of Armenia

Written sources concerning Classical Armenia are of exceptional importance for the study of the history of the period and the reconstruction of historical processes, particularly in view of the geopolitical developments that shaped the region. At the same time, research has demonstrated that references to Armenia and the Armenians are not confined to the territory of the Armenian Highland. Examining these testimonies alongside the epigraphic heritage known from the Armenian Highland and other written sources makes it possible to develop a more comprehensive picture of ancient Armenian history. Moreover, these "stone" testimonies preserved beyond the borders of Armenia allow us to consider Armenia not only within the confines of its own historical territory but also in the broader political and geographical context of the ancient world. They highlight the significance of Armenia's strategic position, political role, and geographical extent.

An examination of selected Greek and Latin epigraphic testimonies concerning Armenia and the Armenians preserved beyond the borders of Armenia suggests that these

inscriptions should not be regarded as isolated records, but rather as integral components of a broader epigraphic context. Considered collectively, they offer a new perspective on the place and role of Classical Armenia within the political, military, and cultural landscape of the ancient world.

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՆ ԳԵՄՄԱՆԵՐԻ ՎՐԱ ՎԿԱՅՎԱԾ ՄԻՋԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ (2-3-ՐԴ ԴԴ.)

Հելեն Գիունաշվիլի
Բ.գ.թ., Թբիլիսիի Գ. Ծերեթելիի անվան Արևելագիտության ինստիտուտ
Իլյա պետական համալսարան

Հնագույն ժամանակներից ի վեր Վրաստանը սերտ կապեր է ունեցել Արևելքի երկրների, հատկապես՝ Իրանի հետ, որի անմիջական հարևանությունը մեծ նշանակություն է ունեցել Վրաստանի քաղաքական և մշակութային պատմության համար: Քանի որ հզոր հարևան Իրանի ազդեցությունը Վրաստանի վրա տարբեր ժամանակաշրջաններում անհավասար է եղել, հետևաբար, իրանական աշխարհի հետ մշակութային շփումների ինտենսիվությունը նույնպես տարբեր է եղել: Այս հարաբերություններն առանձնապես ամրապնդվել են Աքեմենյան կայսրության (Ք.ա. 6-4-րդ դդ.) անկումից հետո՝ հելլենիստական և պարթևական ժամանակաշրջաններում: Հելլենիստական-պարթևական մշակութային ազդակները մեծ նշանակություն են ունեցել վրացական ինքնատիպ հին նյութական և հոգևոր մշակույթի ձևավորման համար:

Հարուստ հնագիտական նյութերը, պատմական վկայությունների նմուշները և մեզ հասած վիմագրական հուշարձանները վկայում են հռոմեապարթևական ժամանակաշրջանի Իբերիայում (Արևելյան Վրաստանի թագավորություն) բազմաբնույթ մշակութային փոխազդեցությունների մասին: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Հին Վրաստանի հունարեն արձանագրությունները:

Մինչև քրիստոնեության ընդունումը (Ք.հ. 4-րդ դար) հունարենը Իբերիայի հիմնական գրավոր լեզուներից մեկն էր: Հռոմեական ողջ ժամանակաշրջանում, մինչև 4-րդ դարը, հիմնականում այս լեզուն էր լայնորեն կիրառվում, իսկ գրավոր մշակույթը պահպանում էր հելլենիստական ժամանակաշրջանում, եթե ոչ ավելի վաղ, ձևավորված ավանդույթը: Հին Վրաստանի հունարեն արձանագրությունները հայտնաբերվել են Իբերիայի մայրաքաղաք Մցխեթայում և նրա շրջակայքում՝ Արմազիում, Բագինեթիում, Սամթավրոյում, ինչպես նաև Արևելյան և Կենտրոնական Վրաստանի այլ հնագույն պատմական վայրերում (ինչպիսիք են Զղուդերին, Ձալիսան, Ծիլկանին): Դրանք փորագրվել են տարբեր առարկաների վրա՝ կոթողների, տապանաքարերի, սալիկների, տախտակների, արծաթե թասերի, թանկարժեք քարերի, կենցաղային իրերի, սրբավայրերի շինությունների, խճանկարների և զարդերի վրա: Ներկայումս, 1-4-րդ դդ. թվագրվող արձանագրությունների ամբողջական կորպուսը ներառում է շուրջ 70 միավոր:

Դրանց մեծ մասը պահպանվում է Վրաստանի ազգային թանգարանի տարբեր ֆոնդերում:

Վաղ շրջանի հունարեն որոշ արձանագրություններ բացահայտում են վրացի ազնվականների միջին իրանական անձնանունների առանձնահատուկ ձևեր. դրանք արտացոլում են իրանական տարբեր բարբառային շերտեր (հարավարևմտյան (վաղ միջին պարսկերեն), հյուսիսարևմտյան (պարթևերեն) և հյուսիսարևելյան (սարմաթերեն)):

Արմազիսխևիի, Մցխեթա-Բագինեթիի և Սամթավրոյի՝ իբերական փոխարքաների շքեղ դամբարաններում հայտնաբերված արժեքավոր իրերի շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն տեղական գլիպտիկ արվեստի նմուշները (գեմմաները), որոնք ստեղծվել են բարձր գեղարվեստական վարպետությամբ: Դրանցից որոշներն ունեն արձանագրություններ:

Մեր խնդրո առարկան Վրաստանի Ս. Ջանաշիայի անվան ազգային թանգարանի գլիպտիկայի ֆոնդում պահվող թանկարժեք քարերի վրա հունարեն արձանագրություններում հայտնաբերված միջին իրանական հատուկ անունների՝ *Καρπάκ, Ἀσπαυρύκις, Κουάκ* և *Βακούρ* պատմական և ստուգաբանական վերլուծությունն է, որն ուսումնասիրում է իրանա-վրացական լեզվական փոխազդեցության մշակութային համատեքստը:

MIDDLE IRANIAN NAMES ON THE ANCIENT GLYPTIC ARTEFACTS AT THE NATIONAL MUSEUM OF GEORGIA (2ND-3RD CENTURIES AD)

Helen Giunashvili
PhD in Philology, G. Tsereteli Institute of Oriental Studies
Ilia State University

Since ancient times, Georgia has maintained close contacts with the countries of the East, especially with Iran, whose immediate neighborhood was of great importance for Georgia's political and cultural history. As the influence of the powerful neighbor Iran on Georgia was uneven in different periods, therefore the intensity of cultural contacts with the Iranian world was diverse. These relationships were particularly strengthened after the fall of the Achaemenid Empire (6 c. BC.- 4c. BC), during the Hellenistic and Parthian periods. The Hellenistic-Parthian cultural impulses were of great importance for the emergence of the original ancient Georgian material and spiritual culture.

Rich archaeological materials, pieces of historical evidence, and epigraphic monuments reached to us attest to miscellaneous cultural interferences in Iberia (East Georgian kingdom) of Roman-Parthian times. In this respect, Greek inscriptions of Ancient Georgia are of particular interest.

Greek was one of chief written languages of Iberia before adoption the Christianity (IV century AD). Throughout the entire Roman period, until the 4th century mainly this language was used extensively, and writing retained the tradition established in the Hellenistic period, if not earlier. Greek inscriptions of Ancient Georgia were found in Mtskheta, the capital of Iberia and its vicinity – Armazi, Bagineti, Samtavro and other ancient historical points of Eastern and Central Georgia (such as Zghuderi, Dzalisa, Tsilkani). They were made on different objects: steles, tomb stones, tiles, plaques, silver bowls, gems, household items, sanctuary buildings, mosaics and jewels. For the present, the whole corpus of inscriptions dated by I-IV cc AD comprises nearly 70 units. Most of them are preserved in different funds of the National Museum of Georgia.

Some of early Greek inscriptions reveal distinguished forms of Middle Iranian proper names of Georgian nobles; they reflect various Iranian dialect layers (south-western (Early Middle Persian), north-western (Parthian) and north-eastern (Sarmatian)).

Among the valuable items found in the luxurious tombs of the Iberian viceroys from Armaziskhevi, Mtskheta-Bagineti and Samtavro, local glyptic artefacts, created with high artistic skill, are of great importance. Some of them are inscribed.

The paper provides a historical and etymological analysis of Middle Iranian proper names—Καρπάκ, Ἀσπαυρύκις, Κουάκ, and Βακούρ—found in Greek inscriptions on gemstones housed in the Glyptic Fund of the S. Janashia National Museum of Georgia. It explores the cultural context of Iranian-Georgian linguistic interference.

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Կարեն Թոխաթյան
Պ.գ.թ., Պատմության ինստիտուտ

Հայաստանի ժայռապատկերների ժամանակային տիրույթը որոշակիացվում է Ք.ա. VII-II հազարամյակների միջև: Ժայռապատկերման ավանդույթների ոճով փորագրություններ կան նաև անտիկ և միջնադարյան հուշարձանների որմերին, սալաքարերի, տապանաքարերի վրա և անձավներում: Վերապրուկները դրսևորված են ըստ տեսքի, ոճի, արտահայտած իմաստի և կատարման տեխնիկայի: Ձևիմաստային որոշ տարրեր հարատևել են նաև հնագիտական գտածոների նախշերում, որմնանկարի, մանրանկարի և գորգի հորինվածքային լուծումներում:

Դեռևս 1913 թ. Լևոն Լիսիցյանը հիշատակել է Երերույքի տաճարի արևմտյան պատին պատկերված քարայծը, իսկ 1949 թ. Բորիս Պիոտրովսկին նշել է Օրբելյանների իջևանատան տանիքի մի շարք փորագրապատկերների մասին: 1970 թ. Վասպուրականի Կրճունիք գավառի Փական գյուղի մոտակա անձավի մուտքի ձախ մասում նկատվել են փորագիր փոքր գծանկարներ՝ թռչուն, ընտանի այծ, տուն կամ դեզ հիշեցնող

նշան: Կան նաև միջնադարյան հավելումներ՝ խաչ, խաչով գմբեթ, նետաձիգ: 1974 թ. Անձևացիք գավառի Չըլկրի գյուղի ավերակ եկեղեցու մոտ գտնվել է գլանաձև սալաքար, որի եզրագծի երկայնքով արված է ժայռապատկերի ոճով հինգ նշան:

Կենդանապատկերներ կան նաև Անիի Մայր տաճարի, Զորադիրի Սբ Էջմիածին եկեղեցու պատերին: 1976 թ. Գուգարքի Թռեղք գավառում՝ Խրամի աջ վտակի կիրճում, հայտնաբերվել է Ցուրտագետի պատկերախումբը: Բնակելի այրերի երկայնքով կա ավելի քան հարյուր նրբագիծ պատկեր: Դրանք թվագրվել են վաղ բրոնզի դարով, թեև կան նաև բազմաթիվ հետագա հավելումներ:

1978 թ. Սյունյաց վաղմիջնադարյան Բաղաբերդ ամրոցում պեղվել է նշանակիր քարասալ: Արուճի տաճարի ու պալատի քարերին ևս նկատվել են ժայռապատկերի ոճով արված նշանագրեր, իսկ Շամիրամի վաղ երկաթի դարի ամրոց-բնակատեղիի դամբանադաշտում հարյուրավոր բոլորաշար քարերի մի մասի վրա կան շրջանակներ, լուսատուների նշաններ, մարդու, կենդանիների ոճավորված պատկերներ: Հին Շենիկի Սբ Աստվածածին եկեղեցու պատերին ևս կան քարայծի և թռչնի փորագրապատկերներ: Տղմուտ վայրում՝ Ապարանի ջրամբարի հյուսիսային եզրին, ամրոց-բնակատեղիի, մատուռի, բոլորաշարերի միջավայրում կան նաև կանանց փորագիր ուրվագիծ պատկերներ ու նշանագրեր:

Արևանման և այլ նշաններ կան Պտղնավանքի պատերին, եղջերվի, քարայծի և նետաձիգի երեք պատկեր է մեզ հասել Բջնիի Սբ Աստվածածին եկեղեցու պարսպի շքամուտքի հիմնաքարերից, փորագիր սխեմատիկ մարդապատկեր՝ Գեղարդավանքից, սևաներկ պարզունակ նկար՝ մոտակա Զորանոց անձավից: Կարսի Գետիկ գյուղի մոտ կա համակենտրոն շրջաններով ու հնգակի պարույրով քար, թերթիկավոր եզրագծով հորիզոնական շրջանաձև քար, իրապաշտական ոճով փորագրված կին, որսի տեսարան, քարայծեր, օձ և ձուկ: Զանազան բուսակենդանական և երկրաչափական նշաններ կան Ավանի Կաթողիկե եկեղեցու որմերին, Սբ Հռիփսիմե, Սբ Գայանե, Մաքենյաց, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Տեղերի, Մարմաշենի վանքերում, Քասաղի բազիլիկ, Օշականի Մանկանոց, Ագարակի, Ամբերդի, Մուսայելյանի, Մաստարայի եկեղեցիների և Արցախի Գանձասարի վանքի պատերին:

Այդօրինակ նշանների լայն կիրառությունն ինքնին վկայում է ավանդական պատկերացումների հարատևման մասին, քանի որ, իբրև վերապրուկ, դրանք տարածված են միջնադարյան հուշարձանների և դեկորատիվ արվեստի կոթողներում:

THE MANIFESTATIONS OF THE PETROGLYPHIC TRADITION IN MEDIEVAL MONUMENTS

Karen Tokhatyan
PhD in History, Institute of History

The chronological framework of Armenian petroglyphs spans the 7th–2nd millennia BC. Engravings reflecting the petroglyphic tradition and executed in the style of early imagery

are found on the walls of ancient and medieval structures, on stone slabs and tombstones, and in caves. These survivals are expressed in the forms, styles, semantic content, and techniques of execution of the images. Certain formal and semantic elements have also persisted in the ornamental motifs of archaeological finds and in the compositions of murals, miniatures, and carpets.

In 1913, Levon Lisitsyan mentioned the engraved image of a wild goat on the western wall of the Yereruyk Basilica. In 1949, Boris Piotrovsky noted several engravings on the roof of the Orbelians' caravanserai. In 1970, small engraved images were observed on the left side of the entrance to a cave near the Pakan village, in the Krchunik region of Vaspurakan. These include a bird, a domestic goat, and a sign resembling a house or a haystack. Medieval additions are also present, including a cross, a dome surmounted by a cross, and an archer. In 1974, a cylindrical stone slab was discovered near the ruined church in the Chlkri village, in the Andzevatsik region. Five signs executed in a petroglyphic style, together with medieval additions, run along the edge of the slab.

Animal motifs are also found on the walls of Ani Cathedral and the St. Etchmiadzin church in Dzoradir. In 1976, the Tsurtaget image group was discovered in a gorge of a right-bank tributary of the Khrami, in the Treghk region of Gugark. More than one hundred finely incised images extend along the inhabited caves. They have been dated to the Early Bronze Age, although numerous later additions are also present.

In 1978, a stone slab with signs was excavated at the early medieval fortress of Baghaberd in Syunik. In Aragatsotn, signs in a petroglyphic style have been observed on the stone blocks of the Aruch temple and palace. At the burial ground of the Early Iron Age fortress-settlement of Shamiram, some of the hundreds of stones forming cromlechs bear circular motifs, signs of luminaries, and stylized human and animal figures. Engravings of a wild goat and a bird are found on the walls of the St. Astvatsatsin church in Hin Shenik. At Tghmut, on the northern edge of the Aparan Reservoir, engraved female outlines and other signs are found in the vicinity of a fortress-settlement, a chapel, and cromlechs.

Sun-like and other signs occur on the walls of Ptghnavank. Three images—a deer, a wild goat, and an archer—are engraved on the foundation stones of the entrance portal in the enclosure wall of the of St. Astvatsatsin church in Bjni. A large rock block at Geghard Monastery bears an engraved schematic anthropomorphic figure. A simple black-painted image is preserved in the nearby Zoranots cave. Getik village, close to Kars, there is a stone with concentric circles and a fivefold spiral, as well as a horizontal circular stone with a petal-shaped border. Other finds include a realistically engraved female figure, a hunting scene, wild goats, a snake, and a fish. Various botanical, animal, and geometric signs occur on the walls of Avan Cathedral, St. Hripsime and St. Gayane, Makeniats, Hovhannavank, Saghmosavank, Tegher, Marmashen, Kasagh Basilica, Mankanots in Oshakan, and the churches of Agarak, Amberd, Musayelyan, and Mastara, as well as at Gandzasar in Artsakh.

The widespread use of these signs attests to the persistence of traditional conceptions. Surviving as vestiges of an ancient pictorial tradition, they appear in monuments of medieval architecture and decorative arts.

ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Արսեն Հարությունյան
Պ.գ.դ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Մատենադարան

Հայ վիմագրության ուսումնասիրությունն այլևս չի սահմանափակվում քարեղեն այդ վավերագրերը սոսկ իբրև պատմական վկայագրեր դիտարկելու ավանդական մոտեցմամբ: Փոխարենը տարբեր առիթներով վիմագրերը հետազոտողների ուշադրությանն են արժանանում նաև իրենց կառուցվածքային, լեզվական, քերականական, գեղագիտական և մի շարք այլ առանձնահատկություններով, ինչն ավելի է ընդլայնում այս սկզբնաղբյուրների գիտական արժեքն ու կարևորությունը: Սակայն հարկ է արձանագրել, որ, ի տարբերություն հայերեն ձեռագրերի, վիմագրերն անհամեմատ սակավ ուսումնասիրված են: Առկա հետազոտությունների առանցքում հիմնականում եղել են վիմագրերի հնագրական, հնչյունաբանական, բառակազմական, երբեմն էլ՝ լեզվաբանական խնդիրները, իսկ, օրինակ, քերականության կամ կետադրության հետ կապված դրսևորումները, կարելի է ասել, համալիր քննության երբևէ չեն արժանացել:

Պարզվում է, որ ինչպես բուն միջնադարի, այնպես էլ՝ վաղ արդի շրջանի վիմագրերում կարելի է փաստագրել նաև կետադրական բազմապիսի նշաններ, որոնք երբեմն արդի քերականական կանոններից շեղված, երբեմն էլ այլատեսակ նշանների կիրառմամբ տեղ են գտել մեր քարեղեն վավերագրերում: Եթե վաղմիջնադարյան վիմագրերում հանդիպում են հիմնականում համառոտագրված բառի վրա դրվող հորիզոնական գիծը՝ պատվի նշանը, կամ վերջակետն ու խաչանշանով արտահայտված սկզբնակետը, ապա զարգացած միջնադարի վիմագրերում պատկերը շատ ավելի բազմատեսակ է: Այստեղ ոչ միայն ավելի է կանոնակարգվում բնագիրը, նախապես տողագծվում է գրադաշտը, գիրն ավելի համաչափ է դառնում, այլև կիրառության մեջ է մտնում մեկական, երկուական, երբեմն էլ՝ երեքական կետանշաններով արտահայտված թվատառը, որը վկայված է ոչ միայն թվական ցույց տվող տառի կամ տառախմբի հետ, այլև՝ առհասարակ, թվի նշանակությամբ օգտագործված տառերի դեպքում: Միջակետն ու վերջակետը նույնպես այս շրջանի վիմագրերում հաճախ հանդիպող նշաններից են:

Սակայն վիմագրերում կետադրական նշաններն անհամեմատ առատորեն ու քերականորեն հիմնականում ճիշտ կիրառություն են ստացել վաղ արդի շրջանում՝ 17-րդ դարի կեսերից ի վեր, ինչը կարելի է պայմանավորել տպագրության գյուտի հետ: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի, Նախիջևանի, Սյունիք-Արցախի և այլ վիմագրագիտական դպրոց-

ներից հայտնի վիմագրերում փաստագրելի են ոչ միայն նախորդ ժամանակաշրջաններից ավանդված կետադրության, սղման կամ փոխարկման նշանները, այլև՝ բութը, շեշտը, ստորակետը, մակակետը, ենթամնան և մի շարք այլ կետադրության ու առոգանության նշաններ, որոնց հիմամբ վիմագրում առաջանում է նաև յուրօրինակ բառանջատում՝ դյուրացնելով ու ընկալելի դարձնելով բնագրի վերծանությունը:

THE MANIFESTATIONS OF PUNCTUATION IN THE CONTEXT OF TRADITIONAL ARMENIAN EPIGRAPHY

Arsen Harutyunyan
Dr. Habil., Institute of Archaeology and Ethnography
Matenadaran

The study of Armenian epigraphy is no longer limited to the traditional approach of viewing these stone documents merely as historical testimonies. Instead, on various occasions, inscriptions also attract researchers' attention for their structural, linguistic, grammatical, aesthetic, and several other characteristics, which further expands the scholarly value and importance of these primary sources. However, it should be noted that, unlike Armenian manuscripts, epigraphic inscriptions have been studied to a considerably lesser extent. Existing research has focused primarily on the paleographic, phonological, and morphological aspects of inscriptions, and occasionally on linguistic issues, whereas, for example, phenomena related to grammar or punctuation have, it can be said, never been subjected to comprehensive examination.

It turns out that in the inscriptions of both the Middle Ages proper and the early modern period, a wide variety of punctuation marks can also be documented, which have found their place in our stone records, sometimes deviating from modern grammatical rules and sometimes through the use of different types of signs. While early medieval inscriptions mainly feature the horizontal line placed above an abbreviated word՝ the honorific mark, or the full stop and the initial point expressed by a cross sign, the picture in the inscriptions of the High Middle Ages is much more diverse. Here, not only does the text become more standardized, the writing area is ruled in advance, and the script is more uniform, but a numeral letter marked with single, double, and sometimes even triple dots also comes into use, which is attested not only alongside a letter or group of letters denoting a numeral, but also in general, in the case of letters used to signify a number. The middle dot and the full stop are also among the signs frequently encountered in the epigraphic inscriptions of this period.

However, punctuation marks came into use much more abundantly and, for the most part, correctly from a grammatical perspective in inscriptions during the early modern

period, from the mid-17th century onward, which can be attributed to the invention of printing. In inscriptions documented in the epigraphic schools of the Mother See of Holy Etchmiadzin, Nakhichevan, Syunik-Artsakh, and others, not only are punctuation, abbreviation, and substitution marks inherited from earlier periods attested, but also the *Colon, Emphasis mark, Comma, Word-separation mark, Line-break hyphen*, and a number of other punctuation and prosodic marks, on the basis of which a distinctive word separation also emerges in inscriptions, facilitating and making the decipherment of the original text more comprehensible.

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԻՄԱԳՐԵՐԻ ԳՐԻՉ-ՎԱՐՊԵՏԸ

Լուսինե Հակոբյան
Երևանի պետական համալսարան

Հայ միջնադարյան վիմագրերն ուսումնասիրելիս ականայից հանդիպում ենք նաև այդ վավերագրերի կազմման գործում ընդգրկված վարպետների, որոնք իրենց հաճախ կոչում են «գրիչ» ընդհանրական պատվանունով: Այդ մասնագիտությամբ անձանց գործունեությունը ցայսօր համալիր հետազոտված չէ, եթե նկատի չառնենք անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ միջնադարյան հայ ճարտարապետներին և քարգործ վարպետներին նվիրված կոթողային աշխատությունը (Երևան, 1963), որի մի առանձին գլուխ նվիրված է գրիչներին: Ի դեպ, վերջիններս կարող էին լինել ինչպես խաչքարագործ վարպետներ, որոնք իրենց հիմնականում կազմող էին կոչում, այնպես էլ՝ վարդապետ-ճարտարապետներ ու հոգևորականներ:

Մենք փորձել ենք տարբեր աղբյուրներում գրիչների անվանական ստորագրությամբ վիմագրերը նախևառաջ մեկտեղել՝ կազմելով ժամանակագրական մի շտեմարան, որտեղ հատկանշել ենք այդ վիմագրերի թվագրությունը, տարածաշրջանը, գտնվելու վայրը, տեղադրությունը, բնույթը, հրապարակման աղբյուրը և գրչի անվան հիշատակման ձևը: «Գրիչ» տերմինը միջնադարում գործածվել է դեռևս հայ մշակույթի հնագույն հիշատակարաններում: Քարի վրա փորագրող կամ մագաղաթի ու թղթի վրա գրչագրող վարպետները սովորաբար ստորագրել են նաև իրենց անունները՝ անվան կողքին հաճախ հիշատակելով «գրիչ», երբեմն էլ՝ «գծող», «գրող», «աշխատող» և համանման այլ տիտղոսներ: Աստվածավախ քրիստոնյայի համար իր անունը վիմագրում կամ ձեռագրի հիշատակարանում ամրագրելն ուներ շատ որոշակի նպատակ. դա առաջին հերթին գրավական էր Կենաց գրքում բարի գործով հիշատակվելու և յուրատեսակ երաշխիք Քրիստոսի Երկրորդ գալստյանը հաջորդող Ահեղ դատաստանի ժամանակ հոգու փրկության համար: Ենթադրելի է, որ վիմագրերն ու պատկերաքանդակները նախապես գրվել-նկարվել են մագաղաթի կամ թղթի վրա, որից հետո արտագրվել-քանդակվել են տարբեր շինությունների որմերին, խաչքարերին, տապանաքարերին և այլուր:

Նյութի նախնական ուսումնասիրությունը պարզում է, որ գրչի ներկայությունը վիմական արձանագրություններում միակերպ չէ, ուստի ինչպես մասնագիտությունը ցուցող տերմինը, այնպես էլ անձի գրիչ լինելն արտահայտվում է տարաձև. «ես՝ …գրեցի», «…, որ գրեցի զյիշատակս», «գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ…», «…գրիչ» և դրանց զուգակցվող «մեղաւոր», «անարժան», «տխմար» և այլ անձը խոնարհեցնող ձևակերպումներով:

THE SCRIBE-MASTER OF ARMENIAN MEDIEVAL INSCRIPTIONS

Lusine Hakobyan
Yerevan State University

In studying medieval Armenian epigraphic inscriptions, one inevitably encounters the artisans who composed and carved them. These men often styled themselves with the generic title "scribe" (grich). The activity of these figures has so far received no comprehensive study, with the exception of the monumental work by the eminent epigraphist Sedrak Barkhudaryan on medieval Armenian architects and stonemasons, one chapter of which is devoted to scribes (Yerevan, 1963). Notably, scribes could be khachkar carvers, who usually styled themselves "compilers" (kazmogh), but also master-architects and clergymen.

The first stage of the research involved collecting inscriptions signed by scribes from various sources and arranging them in a chronological catalogue. Each entry gives the inscription's date, region, site, position on the monument, type, publication reference, and the title by which the scribe designates himself. The term grich ("scribe") was current in the Middle Ages and appears already in the earliest Armenian colophons. Craftsmen who carved in stone, or copied manuscripts on parchment and paper, commonly signed their names, frequently adding the title "scribe" and, less often, gtogh ("drawer"), grogh ("writer"), ashkhatogh ("worker") or similar epithets.

For a devout Christian, the commemoration of one's name in a epigraphic inscription or a manuscript colophon had a quite specific purpose. Above all, it was a pledge that he would be remembered for his good works in the Book of Life, and a kind of surety for the salvation of his soul at the Last Judgment that follows Christ's Second Coming. It is likely that inscriptions and figural reliefs were first drafted or drawn on parchment or paper, and only then transferred to the walls of buildings, khachkars, tombstones and other surfaces.

A preliminary survey of the material shows that scribes do not appear in lapidary inscriptions in a uniform way. Both the term denoting the craft and the very fact of being a scribe are expressed in different forms: "I, …, wrote"; "…, who wrote in my memorial"; "wrote my colophon by my hand…"; or simply "… scribe" (grich). These are frequently

combined with expressions belonging to the topos of humility, such as "sinful" (meghavor), "unworthy" (anarzhan) and "foolish" (tkhmar).

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎՈՒՄՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԽԻՎ. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ 1641–1917 ԹԹ. ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գայանե Հովհաննիսյան
Բ.գ.դ., պրոֆ., Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոն
Համեստ Թամրազյան
Բ.գ.թ., դոցենտ, Լոզանի դաշնային պոլիտեխնիկ ինստիտուտ

Վիմագրությունը աշխարհասփյուռ հայ համայնքի քաղաքական պատմության արխիվների ակամա պահապանն է: Այն տարբերվում է փաստաթղթային արխիվներից, որոնց դասակարգումն ու կազմակերպման սկզբունքներն ընտրում է տեղի և ժամանակաշրջանի վարչական իշխանությունը: Մինչդեռ արձանագրությունը կամայական փաստագրում չէ, այլ գործողություն է. կատարված հիշատակում, իրացված իրավասություն, անշրջելի վայրում ամրագրված պարտավորություն: Ուստի համայնքային կառուցվածքի մասին նրա վկայությունը զերծ է կամայական ներկայացումից: Սույն ուսումնասիրությունն առաջարկում է վիմագրական հավաքածուներն ընթերցել հենց այդպես՝ որպես *ինքնաբուխ քաղաքական արխիվներ*. արձանագրություններ, որոնցում համայնքի կազմակերպվածությունը ընթեռնելի է առանց երբևիցէ նկարագրական միջամտության ենթարկվելու:

Գաղութային Հնդկաստանի հայկական արձանագրությունները այս գաղափարի վկայությունն են: Մադրասից, Կալկաթայից, Հայդարաբադից և Մումբայից մոտ 180 արձանագրություն՝ թվագրված 1641–1917 թթ. և գրանցված Բրիտանական գրադարանի Endangered Archives ծրագրի (EAP1721) շրջանակում, ավանդական հայկական վիմագրական բանաձևումները՝ անուն և հայրանուն, ծագման վայր, տիտղոս/պաշտոն, թվարկության համակարգ և կանգնեցնող կողմ, մեզ են փոխանցում հայ վաճառականական սփյուռքի հանրային կառուցակարգումը, որը ծագել և զարգացել է չորս հաջորդական քաղաքական կարգերի ներքո: Վերլուծության մեթոդը բխում է հենց քննության ենթակա նյութից: Այն գալիս է հենց վիմագրերի բանաձևերից, քանի որ հայ վիմագրությունը միշտ էլ արձանագրությունը դիտարկել է որպես փաստագրման կազմակերպ, կարգավորված ակտ. *յիշատակ* բանաձևն, օրինակ, նշում է նվիրատուին, փոխանցվողը, ընդունող հաստատությունը և պատժական դրույթը, իսկ տապանագիրը՝ իր կայուն բանաձևերում նույնպես ներառում է գործողությունների և դերակատարներ, հանրային, հոգևոր և այլ տիպի հարաբերություններ, որոնք բնութագրում են հանգուցյալին և նրա աշխարհը:

Այդ բանաձևերից այս քննությամբ առաջադրել ենք սփյուռքում հաստատված հանրային ինքնակազմավորման կաղապար՝ բաղկացած *կենտրոնացում*, *իրավասություն*,

արձանագրում տարրերից, որտեղ յուրաքանչյուր անդամը վիմագրական բանաձևի իմաստաբանական նկարագրության կոնկրետ շերտի չափելի մեծություն է: Հավաքածուն արդեն վկայում է դրանցից երկուսը՝ ծագումնաբանական աշխարհագրություն, որտեղ քաղաքների միջև 43 կապից 26-ը հանգում է սեֆյան և նոր-ջուղայական տեղանուններին, և պահպանողական արձանագրում, որը ցույց է տալիս, որ իրավասությունը հարատևել է ավելի երկար, քան իրեն ծնող առևտրային հավաքական կառույցը: Այս շարունակականությունը հատկանշական է ոչ միայն հնդկահայ գաղութին, և պետք է դիտարկել որպես բնութագրող հատկանիշ, ըստ որի համայնքի հաստատություններն առաջ են ընկնում այն քաղաքական կարգերից, որոնց ներքո ապրում է համայնքը, ճանաչումը հաջորդում է կայացմանը, և համայնքի՝ իր մասին ստեղծած արձանագրությունն ավելի վաղ վկայություն է և ավելի տեղեկության առումով ավելի լիարժեք, քան իր մասին դրսից ստեղծված վկայությունները: Կորպուսը ներկայացնում է միայն այն ինչ տրված է նրա նկարագրությամբ: Վիմագրական կորպուսի բանաձևը չորս հիմնական տարրից է բաղկացած. ով է անձը, որտեղից է սերվել, որ դարաշրջանին է պատկանում և ով է պահպանել այդ որմնագրությունն առ այսօր: Տվյալների և մետատվյալների այսպիսի փաստագրումն է համայնքին տալիս ի՛ր գիտելիքն ի՛ր սեփական ինստիտուցիոնալ անցյալի մասին:

THE EPIGRAPHIC FORMULARY AS A POLITICAL ARCHIVE: ARMENIAN INSCRIPTIONS IN INDIA, 1641–1917

Gayane Hovhannisyan
Dr. Habil., Prof., Scientific-Research Center of Historical and Cultural Heritage
Hamest Tamrazyan
PhD in Philology, Associate Professor,
Swiss Federal Technology Institute of Lausanne (EPFL)

The political history of a dispersed community is most reliably recovered from records that were never intended to preserve it[1]. Documentary archives are intentional: their categories are chosen by the power that keeps them, and a community appears in them in the terms that power found administratively relevant. An inscription is not documentation but an act — a commemoration performed, an entitlement exercised, an obligation fixed where it cannot be withdrawn. Its evidence of institutional structure is therefore unselected, and this paper reads epigraphic corpora accordingly, as *non-intentional political archives*: records in which the organisation of a community is legible precisely because it was never the object of description.

[1]The study was carried out on the material of EAP1721, 2025–2026, Principal Investigator Hamest Tamrazyan.

The Armenian inscriptions of colonial India offer a demanding instrument. Roughly 180 texts from Madras, Kolkata, Hyderabad and Mumbai, dated between 1641 and 1917 and inventoried under the British Library's Endangered Archives Programme (EAP1721), carry the traditional Armenian lapidary formulary — name and patronymic, place of origin, office where held, era of reckoning, and the party at whose charge the stone was set — into a merchant diaspora living under four successive political orders. The analytic key is not imported: the formulary supplies it, because Armenian epigraphy has always treated the inscription as a documentary act: the *yišatak* formula names a donor, a transfer, a recipient institution and a sanction, and the epitaph, through a different formula set, likewise requires that the party competent to act be named.

From that requirement the paper derives a three-term model of institutional formation in diaspora — *concentration*, *warrant*, *registration* — and operationalises each term as a measurable property of the epigraphic description layer. The corpus already evidences two of them: a provenance geography in which twenty-six of forty-three inter-town references resolve to Safavid and New Julfan referents, and a custodial record demonstrating that entitlement outlived the commercial concentration that produced it. The sequence is transferable: wherever a community's institutions precede the political orders under which it lives, recognition follows consolidation, and the record a community produced of itself is earlier and more informative than the record produced about it. A corpus answers only the questions its description allows. Four fields decide it: who acted, where a person came from, which era they counted by, and who has kept the stone since. Record them, and a community can still read its own institutional past; leave them out, and only what others built remains.

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԷՋԵՐԸ

Միքայել Բադալյան
Պ.գ.թ., Պատմության ինստիտուտ

ՀՀ մայրաքաղաք Երևանը տարածաշրջանի այն բացառիկ կենտրոններից է, որտեղից հայտնաբերվել են բազմաբովանդակ սեպագիր արձանագրություններ: Այս առումով խիստ ուշագրավ է, որ Հայկական լեռնաշխարհից և հարակից շրջաններից ներկայումս հայտնի շուրջ 800 միավոր սեպագիր արձանագրություններից մոտ 250-ը գտնվել է Երևանի տարածքից: Դրանք ի հայտ են եկել Էրեբունուց, Կարմիր բլուրից (Թեյշեբաինի) և Նորագավիթից: Արձանագրություններն արվել են քարի, մետաղի, կավի վրա և բովանդակում են Սարդուրի Ա-ի (՞), Մենուայի, Արգիշթի Սարդուրորդու, Ռուսա Արգիշթորդու, Սարդուրի Ռուսայորդու, Ռուսա Ռուսայորդու, Սարդուրի Սարդուրորդու, ինչպես նաև՝ Ուրարտուի առեղծվածային արքաներից մեկի՝ Ռուսա Էրիմենայորդու անունները: Ընդ որում, Ռուսա Էրիմենայորդու՝ Էրեբունուց հայտնաբերված սեպագիրը

հետաքրքիր և յուրօրինակ է նաև նրանով, որ այն արվել է ոչ թե բազալտի, այլ տուֆի վրա: Թեյշեբաինիի կավե սալիկներից մեկն էլ կարծես թե վերաբերում է Էրիմենային:

Երևանից հայտնաբերված ուրարտական սեպագիր արձանագրությունները գլխավորապես ունեն շինարարական, կրոնաճիսական, տնտեսական, տեղեկատվական, նվիրատվական, ինչպես նաև հաղորդակցային բնույթ: Հարկ է նշել, որ Էրեբունի հնավայրից հայտնաբերված չորս նույնաբովանդակ արձանագրությունները համարվում են Երևանի քարե անձնագրերը: Դրանք կարևոր սկզբնաղբյուրներ են, որոնք Էրեբունի քաղաքի հիմնադրման վերաբերյալ տեքստերով մատնանշում են մայրաքաղաքի առավել քան 2800-ամյա գրավոր պատմության սկիզբը: Երևանում է գտնվել նաև Թեյշեբաինի ամրոցում՝ Ռուսա Արգիշթորդու կողմից կերտած սուսի տաճարի հիմնաքարերին արված լայնածավալ արձանագրությունը, որն ամենաընդարձակն է ՀՀ-ում: Թեյշեբաինիից հայտնաբերվել են բազմաթիվ նվիրատվական արձանագրություններ՝ արված տարատեսակ մետաղե առարկաների վրա (վահաններ, սաղավարտներ, ումբոններ, ճարմանդ և այլն): Այս համատեքստում բացառիկ գտածո են համարվում Թեյշաբաինիի ամրոցում՝ կարասներից մեկից գտնված 97 արձանագիր թասերը, որոնք ամփոփում են Ուրարտուի տերության տարբեր անուններ: Էրեբունուց և Թեյշեբաինիում բացված ավելի քան 80 կարասների վերնամասերում սեպագրով արձանագրված են դրանց վերաբերող տարողության միավորները:

Տարածաշրջանի հնագույն պատմության, հաղորդակցության համակարգի, առևտրեականության և մի շարք այլ ոլորտների համար բացառիկ սկզբնաղբյուր են համարվում Կարմիր բլուրից հայտնաբերված կավե սեպագիր սալիկները: Հարկ է նշել, որ բոլոր ուրարտական հնավայրերից հայտնաբերված նման սալիկների թիվը չի անցնում 30-ը, որոնցից 11-ը գտնվել է հենց Կարմիր բլուրից:

Երևանի տարածքից հայտնաբերվել են նաև մեհենագիր արձանագրություններով բազմաթիվ արտեֆակտեր, իսկ Երևանի ուրարտական դամբարանից հայտնի է դարձել դեռևս անհայտ մի գիր, որի մի քանի նշաններ իրենց ակնհայտ զուգահեռներն ունեն հայկական միջնադարյան ծածկագրության մեջ գործածված որոշ տառերի հետ:

THE CUNEIFORM PAGES OF YEREVAN'S WRITTEN HISTORY

Mikayel Badalyan
PhD in History, Institute of History

The capital of the Republic of Armenia, Yerevan, is one of the exceptional centres in the region from whose territory a wide range of cuneiform inscriptions has been discovered. Of particular significance is the fact that approximately 250 of the nearly 800 cuneiform inscriptions currently known from the Armenian Highlands and adjacent regions have been found within the territory of Yerevan. These inscriptions originate from Erebuni, Karmir Blur

(Teishebaini), and Noragavit. Executed on stone, metal, and clay, they bear the names of Sarduri I (?), Menua, Argishti son of Sarduri, Rusa son of Argishti, Sarduri son of Rusa, Rusa son of Rusa, Sarduri son of Sarduri, and one of the enigmatic kings of Urartu, Rusa son of Erimena. The cuneiform inscription of Rusa son of Erimena discovered at Erebuni is particularly noteworthy for its unusual medium: unlike most royal inscriptions, it was carved not on basalt but on tuff. One of the clay tablets discovered at Teishebaini may also refer to Erimena.

The Urartian cuneiform inscriptions discovered in Yerevan are primarily associated with construction, religious and ritual practices, economic activities, information recording, votive dedications, and communication. Four inscriptions of identical content discovered at Erebuni are regarded as the *stone passports of Yerevan*. These important primary sources contain accounts of the foundation of Erebuni and mark the beginning of the capital's more than 2,800-year-long written history. Yerevan is also the place of discovery of the extensive inscription carved on the foundation stones of the Temple of Susi at the fortress of Teishebaini by Rusa son of Argishti. It is the longest cuneiform inscription discovered within the Republic of Armenia. Numerous votive inscriptions have also been found at Teishebaini, engraved on various metal objects, including shields, helmets, shield bosses, and a clasp. An exceptional assemblage comprises 97 inscribed bowls discovered in one of the large storage jars within the fortress of Teishebaini; these inscriptions record various names associated with the Urartian kingdom. In addition, capacity units are recorded in cuneiform on the upper rims of more than 80 large storage jars excavated at Erebuni and Teishebaini.

The clay cuneiform tablets discovered at Karmir Blur constitute an exceptional primary source for investigating the ancient history of the region, its communication networks, everyday life, and various other aspects of Urartian society. Fewer than 30 such tablets are known from all Urartian archaeological sites, 11 of which were discovered at Karmir Blur alone.

Numerous artefacts bearing *mehenagir* inscriptions have also been discovered within the territory of Yerevan. Furthermore, the Urartian tomb of Yerevan yielded evidence of a previously unknown writing system. Several of its signs have apparent parallels among certain characters used in medieval Armenian cryptographic writing, raising important questions concerning the nature, chronology, and possible cultural connections of this still-undeciphered script.

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ. ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՐՁԱՆ»-Ի ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Սուսաննա Ադամյան
Պ.գ.թ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի (1876-1953) գիտական հետազոտությունների առանցքում նաև հայերեն վիմագրերն էին: Դրա վառ ապացույցը ներկայումս Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) պահվող «Հայարձան» աշխատության ձեռագիրն է, որում ամփոփված են 2000 վիմագրեր՝ գրառված Կ. Պոլսից մինչև Աղվանք, Իրանից մինչև Ռուսաստանն ընկած հայահոծ բնակավայրերից: Բնականաբար, լեզվաբանը բոլոր վիմագրերն անձամբ չի տեսել, սակայն դրանք մանրամասն քննել է ինչպես լեզվաբանական, այնպես էլ՝ պատմական և քերականական տեսանկյունից:

Հ. Աճառյանի լեզվաբական աշխատություններում հաստատված սկզբունքներն ուղղակի կապ ունեն վիմագրերի վերծանության սկզբունքների հետ: Այս առումով, կարելի է ասել, Աճառյանը իր նախորդների՝ Ն. Մառի և Հ. Օրբելու ուղղակի հետևորդն էր, որն առաջարկում էր վիմագրերի ընդօրինակություններում պահպանել բնագրի բոլոր առանձնահատկությունները. համառոտագրություններ, կցագրեր, նշել բնագրի վնասված հատվածները, հնարավոր բացթողումները և այլն: Բացի այդ, նա մեծապես կարևորել է վիմագրի լեզվաբանական քննությունը՝ ընդգծելով լեզվի կրած փոփոխությունները տարբեր ժամանակաշրջաններում: Վիմագրերում հանդիպող բառիմաստը որոշելիս՝ կարևոր էր հաշվի առնել դրա ստուգաբանությունը և բարբառային տարբերակները: Ավելին, լեզվական ձևերը կարելի է համեմատել այլ գրավոր աղբյուրներում և հայերենի տարբեր բարբառներում պահպանված համարժեքների հետ, որը հնարավորություն կտար բացահայտելու հնչյունափոխության, քերականական առանձնահատկությունների, գրական և խոսակցական լեզվի փոխհարաբերությունները:

Մեծանուն հայագետը հատուկ ուշադրություն է դարձրել նաև անձնանուններին և տեղանուններին, քանի որ այդ ընթացքում նա պատրաստում էր իր նշանավոր բառարանը: Վիմագրի բովանդակությունը մեկնաբանելիս՝ նա այն համադրում էր դրա ստեղծման ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների, հասարակական հարաբերությունների ու մշակութային միջավայրի հետ, ինչը նպաստում է անձնանունների, պաշտոնների, թվականների, պատմական հիշատակությունների ճշգրիտ մեկնաբանմանը:

HRACHYA ACHARIAN: EPIGRAPHIC OBSERVATIONS IN THE CONTEXT OF "HAYARDZAN"

Susanna Adamyan
PhD in History, Institute of Archaeology and Ethnography

The scholarly research of the renowned linguist Hrachya Acharyan (1876–1953) also focused on Armenian inscriptions. A vivid testament to this is the manuscript of his work "Hayardzan", currently preserved at the Yeghishe Charents Museum of Literature and Arts (MLA). The manuscript contains a compilation of 2,000 inscriptions recorded in Armenian-populated settlements extending from Constantinople to Caucasian Albania and from Iran to Russia. Naturally, the linguist did not personally examine all the inscriptions, but he studied them in detail from linguistic, historical, and grammatical perspectives.

The principles established in H. Acharyan's linguistic works are directly related to his approach to the decipherment of inscriptions. In this respect, Acharyan may be regarded as a direct follower of his predecessors, N. Marr and H. Orbeli, who advocated preserving all the features of the original text in transcriptions of inscriptions, including abbreviations and ligatures, as well as indicating damaged passages, possible omissions, and other textual peculiarities. Furthermore, he attached considerable importance to the linguistic examination of inscriptions, emphasizing the changes that languages undergo over different historical periods. In determining the meaning of words encountered in inscriptions, it was essential to consider their etymology and dialectal variants. Moreover, linguistic forms could be compared with their equivalents preserved in other written sources and in various Armenian dialects. Such comparisons made it possible to identify phonetic changes, grammatical features, and the interrelationships between literary and spoken language.

The distinguished Armenian scholar also paid particular attention to personal names and toponyms, as he was working on his renowned dictionary at the time. When interpreting the content of an inscription, he examined it in conjunction with the events, social relations, and cultural context of the period in which it was created. This approach contributed to the accurate interpretation of personal names, official titles, dates, and historical references.

ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆ.
ԱԽՏԱՑՈՒՅՑ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

Սաթենիկ Խուրշուդյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայ բժիշկ, պատմաբան, հասարակական գործիչ Վահրամ Թորգոմյանը ծնվել է 1858 թ. Կոստանդնուպոլսում: 1884 թ. ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը, ուսումնասիրել Վենետիկի Մխիթարյան միաբանության և Փարիզի ազգային գրադարաններում պահված հայ բժշկության պատմությանը վերաբերող բազմաթիվ ձեռագրեր: Իր ուսումնասիրությունների արդյունքները բժիշկ-պատմաբանն ամփոփել է մի շարք աշխատություններում, որոնցից մեկը՝ «Ախտացույց տապանագրեր» խորագրով, հետագա ուսումնասիրողների համար վիմագրագիտական քննություն իրականացնելու նյութ պիտի հանդիսանար:

Վ. Թորգոմյանը համակարգված կերպով ուսումնասիրել է Կոստանդնուպոլսի ազգային գերեզմանոցներն ու ընդօրինակել բազմաթիվ տապանագրեր, որոնցում հիշատակություններ կան ինչպես բժիշկների, այնպես էլ՝ մահվան պատճառ հանդիսացող հիվանդությունների մասին: 1939-1940 թթ. Բոստոնում տպագրվող «Հայրենիք» պարբերականի էջերում լույս են տեսել «Ախտացույց տապանագրեր» հոդվածաշարի համարները: Հոդվածի նախաբանում նշված է, որ հեղինակը գրառել է ավելի քան 50 տապանագիր, որոնց բովանդակությունը պայմանականորեն բաժանել է երկու խմբի. «Ախտացույց տապանագրեր» և «Շիրմագրեր»:

Մեր խնդիրն ախտացույց տապանագրերում վկայված հիվանդություններն ու համաճարակները քննության նյութ դարձնելն է: Տապանագրերը ներկայացվում են ժամանակագրական կարգով՝ յուրաքանչյուր արձանագրությանը կից տալով համառոտ տեղեկություն դրա գտնվելու տեղի, վիճակի, տողերի քանակի, գրատեսակի, վկայված անձի և մահվան պատճառ հանդիսացող հիվանդության կամ համաճարակի մասին: Այդօրինակ տապանագրերն հիմք են հանդիսանում պարզելու այս կամ այն տարածաշրջանում երբևէ տեղի ունեցած համաճարակների պատմությունը, դրանց տարածման ժամանակագրությունը, վիճակագրական-ժողովրդագրական պատկերը և այլ մանրամասներ: Տապանագրերի այս հոդվածաշարը հետագայում հիմք է հանդիսացել Վ. Թորգոմյանի «Հայ բժշկական արձանագրություններ» վերտառությամբ աշխատության համար:

VAHRAM TORGOMYAN:
THE RESEARCHER OF EPIDEMIC-RELATED EPITAPHS

Satenik Khurshudyan
Institute of Archaeology and Ethnography

Vahram Torgomyan, an Armenian physician, historian, and public figure, was born in Constantinople in 1858. In 1884, he graduated from the Faculty of Medicine of the University of Paris. He studied numerous manuscripts relating to the history of Armenian medicine preserved in the libraries of the Mekhitarist Congregation in Venice and the Bibliothèque nationale de France in Paris. The physician and historian summarized the results of his research in several works, one of which, entitled Epidemic-Related epitaphs, was intended to serve as a source for epigraphic investigations by subsequent scholars.

V. Torgomyan systematically studied the Armenian national cemeteries of Constantinople and copied numerous epitaphs containing references both to physicians and to diseases that had caused death. In 1939–1940, issues of the series of articles entitled Epidemic-Related epitaphs were published in the pages of "Hayrenik", a periodical issued in Boston. The preface to the article states that the author had recorded more than 50 epitaphs and provisionally divided their contents into two groups: "Epidemic-Related Epitaphs" and "Gravestone Inscriptions."

The aim of the present study is to examine the diseases and epidemics documented in the epidemic-related epitaphs. The inscriptions are presented in chronological order, with each accompanied by brief information concerning its location, condition, number of lines, script type, the person commemorated, and the disease or epidemic that caused their death. Such inscriptions provide a basis for reconstructing the history of epidemics that occurred in particular regions, establishing their chronology and spread, examining their statistical and demographic profiles, and investigating other related details. This series of articles on epitaphs subsequently served as the basis for Torgomyan's work entitled "Armenian Medical Inscriptions."

ԱՐՑԱԽԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՍՏԵՂԾՈՒՄ. ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Արփինե Ավետիսյան
Սորբոն Նուվել, Փարիզ, Մատենադարան
Շահան Վիդալ-Գորեն
Խարտիաների ազգային դպրոց,
Գիտությունների և գրականության համալսարան, Փարիզ. Կալֆա

Վիկտորյա Խուրշուդյան
Բ.գ.թ., դոցենտ, Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների
ազգային ինստիտուտ, Փարիզ
Պոլետ Սամվելյան
Բ.գ.թ., պրոֆ., Սորբոն Նուվել, Փարիզ

Արցախի Մարտակերտի շրջանի արձանագրություններն առաջին անգամ դիտարկվում են թվային ծանոթագրմամբ կորպուսի ստեղծման և դրա հիման վրա հայերենի հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական տարբերակայնության ուսումնասիրության նախագծի համապատկերում: Կիրառելով միջազգային չափորոշիչներ՝ այն համադրում է պատմական լեզվաբանությունն ու թվային վիմագրությունը, ի մասնավորի՝ նկատի առնելով 1982 թ. հրատարակված «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 5-րդ հատորը:

Վիմագրագիտությունը, ինչպես և գիտության բազմաթիվ այլ ոլորտներ, զգալիորեն փոխակերպվել է թվային մեթոդների կիրառման շնորհիվ, որոնք բարելավել և որոշ դեպքերում արմատապես փոխել են արձանագրությունների պահպանման, ուսումնասիրման, վերլուծության և տարածման ավանդական մոտեցումները: Տեքստի կոդավորման, մեքենայական ուսուցման և հաշվողական այլ մեթոդների զարգացումն ուսումնասիրողներին հնարավորություն է տվել հավաքագրել, համակարգել և վերլուծել միասնական թվային տվյալներ:

Հայերեն արձանագրությունները պահպանում են արժեքավոր վկայություններ լեզվի զարգացման և այն օգտագործող համայնքների մասին: Նախագիծը բաց հասանելիությամբ և որոնելի տարբերակով կներկայացնի լուսանկարներ, գրչանկարներ, բնագրերի վերծանություններ և լրացուցիչ տեղեկատվություն՝ արձանագրության տեղի, հուշարձանի, թվականի և այլ դրույթների մասին: Յուրաքանչյուր արձանագրություն կունենա բնագրին համապատասխան տառադարձություն, որը պահպանում է դրա տեսանելի առանձնահատկությունները, և մշակված տարբերակ, որը հարմար է որոնման և հաշվողական վերլուծության համար: Վնասված մասերը, անորոշ ընթերցումները, հապավումները և խմբագրական վերականգնումները հստակորեն կգրանցվեն: Այս ամենից հետո կիրականացվի արձանագրությունների լեզվաբանական վերլուծությունը, որը կընդգրկի հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքների ուսումնասիրությունը:

Բնական լեզվի մշակման (NLP) գործիքները կօգնեն տեքստը բաժանել միավորների (tokenization), ապա առանձնացնել բառույթները (lemmatization) և քերականական «պիտակավորման» ենթարկել (grammatical tagging): Հայտնաբերման և դասակարգման համակարգը կարող է օգնել վնասված պատկերների վրա տեղակայել արձանագրությունները, բնագրի տողերն ու գրանշանները: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ YOLO համակարգի վրա հիմնված փուլային հայտնաբերումը և Vision

Transformer-ի միջոցով նմանության որոնումը հեռանկարային են տվյալների սահմանափակ հասանելիության պայմաններում:

Ռեսուրսը նախագծվում է այնպես, որ ապահովվի դրա հետագա ինտեգրումը թվային ժառանգության ենթակառուցվածքների մեջ, այդ թվում՝ DALiH-ի (Հայկական լեզվական ժառանգության թվայնացում) և Calfa-ի (https://calfa.fr): Թվային կորպուսի նախնական տարբերակն արդեն պատրաստ է և կհրապարակվի առաջիկայում լրացուցիչ խմբագրումից ու սրբագրումից հետո:

BUILDING A DIGITAL CORPUS OF ARTSAKH INSCRIPTIONS: THE MARTAKERT REGION AS A CASE STUDY

Arpine Avetisyan
PhD student, Sorbonne Nouvelle University, Paris, Matenadaran
Chahan Vidal-Gorène
École nationale des chartes, Université Paris, Sciences & Lettres, Paris
Calfa, Paris
Victoria Khurshudyan
PhD in Linguistic Typology, INALCO, SEDYL, CNRS
Pollet Samvelian
PhD in Linguistics, prof., Sorbonne Nouvelle University, Paris

The inscriptions from the Martakert region of Artsakh are examined within the framework of a project to create a digitally annotated corpus. This corpus provides a basis for investigating phonetic, lexical, morphological, and syntactic variation in Armenian. By applying international standards, the project brings historical linguistics into dialogue with digital epigraphy, drawing in particular on the fifth volume of the Divan Hay Vimagrutyan (Corpus of Armenian Epigraphy), published in 1982.

Epigraphy, like many fields of study, has been significantly transformed by digital methods, which have improved—and in some cases fundamentally altered—traditional approaches to preserving, studying, analyzing, and disseminating historical inscriptions. Advances in text encoding, machine learning, and other computational methods have enabled epigraphers to collect, curate, and analyze integrated digital records.

Armenian inscriptions preserve valuable evidence about the development of the language and the communities that used it. The project will bring together photographs, existing drawings, transcriptions, and contextual information in a searchable, openly accessible resource. Each inscription will have a diplomatic transcription that preserves its visible features and a normalized version suitable for search and computational analysis. Damage, uncertain readings, abbreviations, and editorial restorations will be recorded explicitly. A linguistic analysis of the inscriptions will follow, examining their phonetic, lexical, morphological, and syntactic structures.

NLP tools will assist with tokenization, lemmatization, grammatical tagging, and the identification of personal and place names. A detection-and-classification pipeline can help locate inscriptions, text lines, and glyphs in varied and damaged images; preliminary research suggests that staged YOLO-based detection and Vision Transformer similarity search are promising in this low-resource setting.

The resource will be designed for open access, machine-actionability, and future integration with digital heritage infrastructures, including DALiH (Digitizing Armenian Linguistic Heritage) and Calfa (https://calfa.fr). A preliminary version of the digital corpus has already been compiled and will be released after further editing and proofreading.

ԳԻՐԸ, ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԾԵՍԸ. ԱՇՏԱՐԱԿԻ ԾԱԿ ԽԱՉԸ

Համլետ Պետրոսյան
Պ.գ.դ., պրոֆ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան
Վիկտորիա Գալստյան
Երևանի պետական համալսարան

Մոնղոլական տիրապետության շրջանում խաչքարային մշակույթի առանձին դրսևորումների դիտարկումը որպես քաղաքական և դավանական բարդ իրավիճակի համատեքստային արտահայտություն, ինքնին ուշագրավ է: Այս առումով հատկապես աչքի է ընկնում Աշտարակի Ծակ խաչը, որպես համահայաստանյան գործընթացի առաջին, բայց և լիարժեք դրսևորումներից մեկը:

Աշտարակի Ծակ խաչը նախևառաջ աչքի է ընկում իր ընդարձակ արձանագրությամբ, որը ներկայացնում է 13-րդ դարի կեսերին ձևավորվող ինտելեկտուալ նոր մոտեցման սկիզբը, երբ փորձ էր արվում Քրիստոսի փրկագործական խաչելությունը ներկայացնել արձանագրության և քանդակային հորինվածքի համատեղությամբ: Այն նախորդում է հանրահայտ Ամենափրկիչ խաչքարերին, որտեղ արդեն կիրառվում է քանդակային հորինվածքի և արձանագրության ավելի կատարելագործված համակարգ, երբ արձանագրությունը դառնում է հորինվածքի առանձին մոտիվների «բացատրության» գործիքը:

Ծակ խաչի ճարտարապետական ձևավորումը՝ խաչքարի պատվանդանի վերածումը մատռակերպ տարածքի, նույնպես ցուցում է այն ավելի ընդարձակ շարժման սկիզբը, երբ մոնղոլական տիրապետության շրջանում ահագնանում են կյանքի վերջի մասին տագնապները և հոգեհանգստյան պատարագը դառնում է դրան նախապատրաստվելու ամենագործուն միջոցը: Բացօթյա խաչքարը չուներ պատարագ մատուցելու սրբազան տարածք, բայց ակնհայտ են ջանքերը՝ լուծում տալու նաև այդ խնդրին:

THE INSCRIPTION, THE IMAGE, AND THE RITUAL: THE TS'AK KHACH OF ASHTARAK

Hamlet Petrosyan
Dr. Habil. in History, Prof., Institute of Archaeology and Ethnography
Yerevan State University
Viktoria Galstyan
Yerevan State University

Examining particular manifestations of khachkar (cross-stone) culture during the period of Mongol rule as contextual expressions of a complex political and religious situation is, in itself, of considerable interest. In this respect, the Ts'ak Khach of Ashtarak stands out in particular as one of the earliest, yet fully developed, manifestations of a broader pan-Armenian process.

The Ts'ak Khach of Ashtarak is distinguished first and foremost by its extensive inscription, which represents the beginnings of a new intellectual approach emerging in the mid-thirteenth century. At that time, efforts were being made to depict Christ's redemptive Crucifixion through the combined use of an inscription and a sculptural composition. The monument predates the renowned Amenaprkich (All-Saviour) khachkars, in which a more sophisticated system integrating sculptural composition and inscription was employed, with the inscription serving as a tool for "explaining" individual motifs within the composition.

The architectural design of the Ts'ak Khach—specifically, the transformation of the khachkar's pedestal into a matr-shaped space—also points to the beginnings of a broader movement. During the period of Mongol rule, anxieties surrounding the end of life intensified, and the memorial service for the deceased became one of the most effective means of preparing for it. An open-air khachkar did not possess a consecrated space in which the liturgy could be celebrated; nevertheless, clear efforts were made to address this very problem as well.

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Անդրեաս Ռոբի
Բյուզանդագիտության դոկտոր
Ավստրիայի գիտությունների ակադեմիա

Հռոմեական կայսրությունը չի ավարտվել մ.թ. հինգերորդ դարում, այլ վերապրել է «ժողովուրդների մեծ գաղթը» (Völkerwanderung) և շարունակել գոյություն ունենալ մինչև վաղ նոր ժամանակաշրջանի սկիզբը: Միայն 1453 թվականին օսմանյան նվաճմամբ Կոստանդնուպոլսի անկմամբ ավարտվեց այն դարաշրջանը, որի ակունքները հասնում

են մինչև Օգոստոսի ժամանակները: Ի տարբերություն լատինական Արևմուտքի՝ Արևելահռոմեական կայսրությունը կամ Բյուզանդական կայսրությունը հունալեզու կայսրություն էր: Հետևաբար, բյուզանդացիներն իրենց արձանագրությունները հիմնականում ստեղծում էին հունարենով, թեև կայսրության տարածքում և հարևան շրջաններում ստեղծվում էին նաև այլ լեզուներով արձանագրություններ:

Այսպիսով, հռոմեական վիմագրական ավանդույթը շարունակվեց նաև բյուզանդական ժամանակաշրջանում, թեև դարերի ընթացքում արձանագրությունների տեսակները փոփոխության ենթարկվեցին: Եթե ուշ անտիկ և վաղ բյուզանդական ժամանակաշրջաններում ստեղծվում էին բազմաթիվ քարե և խճանկարային արձանագրություններ, ապա հետագա դարերում արձանագրությունների բազմազանության մեջ գերակշռող դարձան գեղանկարչական արձանագրությունները: Դրանք հանդես էին գալիս թե՛ որպես ուշ և հետբյուզանդական ժամանակաշրջանների (այսինքն՝ 1453 թվականից հետո) անթիվ եկեղեցիների որմնանկարների բաղկացուցիչ մասեր, թե՛ որպես սրբապատկերների գեղանկարչության տարրեր: Արձանագրությունների բազմազանությունն ակնհայտ է նաև շարժական առարկաների, օրինակ՝ մասունքատուփերի վրա: Բյուզանդիայում լայն տարածում ունեին նաև չափածո արձանագրությունները, ընդ որում՝ միջին և ուշ բյուզանդական ժամանակաշրջաններում գերիշխող չափական ձև դարձավ բյուզանդական տասներկվանկը:

Բյուզանդական հազարամյա պատմությունը «վիմագրական քաղաքակրթություն» (civilisation d’épigraphie) չէր՝ ի տարբերություն Հռոմեական կայսրության, որն այդպես էր բնութագրել նշանավոր վիմագրագետ Լուի Ռոբերը: Այդուհանդերձ, արձանագրություններն ամենուր էին, և Բյուզանդիայի բնակիչները դրանց հանդիպում էին ամեն քայլափոխի: Թեև միջնադարում գրագիտության մակարդակը չափազանց ցածր էր թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում, գրավոր խոսքը՝ արձանագրությունների տեսքով, այնուամենայնիվ հասանելի էր հասարակության լայն շրջանակներին: Արձանագրությունները բարձրաձայն ընթերցվում էին ծիսական արարողությունների ընթացքում: Մարդիկ դիտում էին դրանք կամ ծանոթ էին որոշակի արձանագրային նշանների, որոնք հաճախ էին հանդիպում: Դրանց թվում էին այսպես կոչված ծածկագրերը կամ քառատառ նշանները (cryptograms կամ tetragrams), որոնք, սովորաբար, բաղկացած էին չորս տառից և ուղեկցում էին խաչերի պատկերներին: Այդպիսի նշաններն ունեին չարխափան, այսինքն՝ չարը հեռացնող, ինչպես նաև պաշտպանական նշանակություն:

A MEDIEVAL SOCIETY'S INSCRIPTIONS: THE CASE OF BYZANTIUM

Andreas Rhoby
Priv.-Doz. Dr., IMAFO, Austrian Academy of Sciences

The Roman Empire did not come to an end in the fifth century AD, but survived the 'Völkerwanderung' and continued to exist until the beginning of the early modern period. It was only with the Ottoman conquest of Constantinople in 1453 that the epoch whose origins can be traced back to Augustus came to an end. Unlike the Latin West, the Eastern Roman Empire, or Byzantine Empire, was a Greek empire. Consequently, the Byzantines produced inscriptions primarily in Greek, although inscriptions in other languages were also created within the empire's territory and in neighboring regions.

Thus, Roman epigraphy continued into the Byzantine period, even though the genres of inscriptions changed over the centuries. Whereas Late Antiquity and the Early Byzantine period witnessed the production of numerous stone and mosaic inscriptions, later centuries saw a shift in epigraphic diversity towards painted inscriptions. These appeared both as integral components of frescoes in the countless churches of the Late and Post-Byzantine periods (i.e. after 1453) and as elements of icon painting. The diversity of inscriptions is also evident on portable objects, such as reliquaries. Verse inscriptions were likewise widespread in Byzantium, with the Byzantine dodecasyllable becoming the predominant metrical form during the Middle and Late Byzantine periods.

The Byzantine millennium was not a *civilisation d'épigraphie*, as the renowned epigraphist Louis Robert described the Roman Empire, but inscriptions were nevertheless omnipresent, and the inhabitants of Byzantium encountered them everywhere. Although literacy in the Middle Ages was extremely limited in both the East and the West, the general population still had access to the written word in its inscribed form. Inscriptions were read aloud during performances. People gazed at inscriptions or were familiar with particular inscriptional symbols that appeared frequently. These included so-called *cryptograms* or *tetragrams*, usually consisting of four letters accompanying depictions of crosses. Such symbols had apotropaic, or evil-averting, as well as protective significance.

ԳԻՆՈՒ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Աշոտ Մանուչարյան
Պ.գ.թ., դոցենտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Արագածոտն գավառն ավանդաբար համարվել է այգեգործության ու գինեգործության կենտրոն: Այդ փաստն արձանագրված է նաև Ամբերդում՝ Հայոց սպարապետ, իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու թողած 1026 թ. վիմագրում, ըստ որի՝ նորաստեղծ Ամբերդի եպիսկոպոսության համար Արագածոտնի ամեն մի այգուց տարեկան երկու փասգի հարկ է սահմանվել՝ իբրև պտղի-աթոռահարկ: Վիմագրագետ Սուրեն Ավագյանի պարզաբանմամբ՝ *փասգի* բառը ծագել է *փաս գինի* ազատ բառակապակցության միավորումից, որտեղ *գինի* բառի վերջին վանկը սղվել է: Փասը փարչն է՝ սափոր, որի տարողությունը անորոշ է համարվել: Ս. Ավագյանը մատենագրական աղբյուրների ուսումնասիրությունից պարզել է, որ մեկ փասն ունեցել է 5,32 (5, 44, 5,89, 6, 52) լիտր տարողություն: Ըստ այդմ՝ Արագածոտն գավառի ամեն մի այգուց Ամբերդի եպիսկոպոսական աթոռին տարեկան տրվել է մոտ 10,5-13 լիտր գինի:

Գինու նվիրատվության վկայությամբ հնագույն արձանագրությունն Արագածոտնում՝ փորագրված 10-11-րդ դդ. գեղագիր բոլորաձև երկաթագրով, Կոշավանքի Սբ Ստեփանոս եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ ամփոփված երկտող և թերի վիմագիրն է, ըստ որի՝ Գրիգոր իշխանը վանքին նվիրաբերել է Կոշի խաժ նոր գինի: «Խաժ» բառը ծագում է արաբերեն خاص (խասս) ձևից, որ նշանակում է «հատուկ», «ընտիր»:

13-րդ դարասկզբին Զաքարե և Իվանե Զաքարյան եղբայրները սահմանում են, որ Աշտարակի Ծիրանավոր Սբ Աստվածածին եկեղեցուն տարեկան տրվի 30 սափոր գինի: Մոտավորապես նույն ժամանակաշրջանում 50%-ով զեղչվում է Փարպի գյուղից տարեկան հարկվող գինու հարկը՝ կազմելով 342,72 լիտր, իսկ 1307 թ. Աղբուղա Զաքարյան իշխանը վերացրել է իր հայրենի Թալին գյուղից գանձվող գինու հարկը:

1324 թ. Աշտարակի Կարմրավոր եկեղեցուն որպես պտղի է տրվել 10 փաս գինի (մոտ 53-65 լ) Թամիրի այգուց: Թամիրը նույն Աղթամիրն է, որը գտնվել է Ոսկեվազ գյուղի մոտ: Ըստ Ոսկեվազի Սբ Հովհաննես եկեղեցու բակում գտնվող սյան խոյակի արձանագրության՝ 1473 թ. ոմն Մլեհն իր ամբողջ գինին, որպես տուրք, տվել է Սբ Ամենափրկիչ եկեղեցուն: Նկատենք, որ այսօր Ոսկեվազ գյուղում չկա եկեղեցի Սբ Ամենափրկիչ անունով:

1730-ական թթ. Ամենայն Հայոց կաթողիկոսը վճարել է Թալին-Դաշտադեմի իջևանատան գինու հարկը՝ 1 կարասից 24 սափոր (127,5-156,5 լիտր):

Այսպիսով, Արագածոտնից, գինու հետ առնչվող, ունենք ութ արձանագրություն, որոնցից երեքը նվիրատվական, իսկ հինգը՝ իրավական բնույթի:

EVIDENCE OF WINE IN THE INSCRIPTIONS OF ARAGATSOTN

Ashot Manucharyan
PhD in History, Associate prof., Institute of Archaeology and Ethnography

Aragatsotn province has traditionally been considered a center of viticulture and winemaking. This fact is also recorded in the 1026 inscription of Vahram Pahlavuni—an Armenian commander, Prince of Princes,—which states that an annual tax of two *pasgi* was levied on every vineyard in the Aragatsotn region for the newly established Bishopric of Amberd. According to the explanation provided by epigraphist Suren Avagyan, the word "pasgi" originated from a combination of the independent word "pas" (jug) and the word for "wine", with the final syllable of the latter being omitted. In the past, the capacity of a "pas" (pitcher) was considered to be of indeterminate volume. Based on bibliographic sources, S. Avagyan discovered that a single "pas" had a capacity of 5.32 (5.44, 5.89, 6.52) liters. Accordingly, approximately 10.5–13 liters of wine were provided annually to the episcopal see of Amberd from every vineyard in the Aragatsotn region.

The oldest inscription recording a donation of wine in Aragatsotn—carved in beautiful capital letters—is an unfinished two-line inscription on the eastern wall of the Church of Saint Stepanos at Koshavank; it states that Prince Grigor donated young "khadz" wine from Kosh to the monastery. The word "khadz" derives from the Arabic form خاص (khass), meaning "special" or "chosen".

At the beginning of the 13th century, the brothers Zakare and Ivane Zakaryan decreed that 30 jars of wine should be given annually to the Church of Saint Astvatsatsin-Tsiranavor in Ashtarak. Around the same period, the annual tax on wine from the village of Parpi was reduced by 50%, amounting to 342.72 liters, and prince Aghbugha Zakaryan abolished the wine tax in his ancestral village of Talin in 1307.

In 1324, 10 "pas" of wine (approximately 53-65 liters) from the Tamir vineyard were given to the Karmravor Church in Ashtarak as a tithe. Tamir is the very same Akhtamir that was located not far from the village of Voskevaz. According to the inscription on the column capital in the courtyard of the Church of St. Hovhannes in Voskevaz, in 1473 a certain Mleh donated all his wine as an offering to the Church of St. Amenaprkich. It should be noted that today there is no church named St. Amenaprkich in the village of Voskevaz.

In the 1730s, the Catholicos of All Armenians paid the wine tax for the caravanserai at Talin-Dashtadem, amounting to 24 "saphors" (vessels) per "karas" (large jar)—approximately 127.5 to 156.5 liters.

Thus, from Aragatsotn, we have eight inscriptions related to wine—three of a dedicatory nature and five of a legal nature.

ԴՐԱՄՆ ԻԲՐԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Արմինե Զոհրաբյան
Պ.գ.թ., Հայաստանի պատմության թանգարան

Հայաստանը միջին դարերում ենթարկվել է բազմաթիվ նվաճողների հարձակումներին, որոնք իրենց թողարկած դրամները դարձրել են քարոզչության արդյունավետ միջոց՝ արտահայտելու իրենց տարածքային նկրտումները: Ներկա ուսումնասիրության նպատակն է ցույց տալ միջնադարյան Հայաստանի՝ որպես աշխարհաքաղաքական միավորի կարգավիճակի փոփոխությունը՝ կախված մահմեդական տարբեր իշխանությունների քաղաքականությունից, որն իր արտացոլումն է գտել դրամների արձանագրություններում: Միջնադարյան դրամները նաև անգնահատելի աղբյուր են՝ ցույց տալու Հայաստանի աշխարհագրական տարբեր վայրերի ռազմավարական և տնտեսական նշանակությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ տարբեր նվաճողների մոտեցումը:

Եթե Արաբական խալիֆայության դրամներում պարտադիր նշվում էր «Հայաստան» անունը, ապա սելջուկյան և, ավելի ուշ, մոնղոլական դրամների թողարկումներում երկրի անունը վերանում է՝ տեղը զիջելով առանձին բնակավայրերի անուններին: Այդ երևույթը պայմանավորված էր ոչ այնքան մահմեդական գործոնով, որքան առանձին իշխանությունների տարբեր ռազմաքաղաքական մոտեցումներով: Արաբների օրոք Հայաստանն ընկալվում էր որպես միասնական աշխարհաքաղաքական միավոր՝ իր որոշակի կարգավիճակով, սակայն սկսած 11-րդ դ. երկրորդ կեսից իրավիճակը փոխվում է: Դա պայմանավորված էր նաև Արևելքում ի հայտ եկած բարդ տնտեսական դրությամբ, որը հայտնի է որպես «արծաթի ճգնաժամ» և տևել է մինչև 13-րդ դ. սկիզբը: Տնտեսական իրավիճակը նպաստում է տարածաշրջանի մասնատմանը մեծ ու փոքր մահմեդական իշխանությունների միջև: Հայաստանի տարածքը նույնպես բաժանվում է քուրդ, սելջուկ մի շարք իշխանությունների միջև, որոնք ավելի կարևորում էին իրենց անուններն ու տիտղոսները սելջուկյան բարդ հիերարխիկ համակարգում, քան աշխարհագրական անունները: Դրամներից շատերի վրա պարզապես բացակայում է դրամահատման վայրը:

Մոնղոլները բոլորովին այլ մոտեցում ունեին, որոնց համար երկու կարևոր տիտղոս կար՝ խան և սուլթան: Առաջինն իրենց կապում էր մոնղոլական արմատներին և Չինգիզ խանին, իսկ երկրորդը ներկայացնում էր նրանց որպես իսլամական աշխարհում գերակա իշխանություն: Հայաստանում հատված մոնղոլական դրամներում վկայված են բացառապես բնակավայրեր ներկայացնող դրամահատարաններ, ընդ որում՝ ոչ միայն խոշոր քաղաքների, այլև ոչ մեծ ավանների, որոնց թիվը հասնում է շուրջ մեկ տասնյակի: Նրանց օրոք աշխարհագրական անվանումը դրամներում ձեռք է բերում զուտ վարչատնտեսական իմաստ:

THE COIN AS WRITTEN SOURCE FOR THE HISTORY OF MEDIEVAL ARMENIA

Armine Zohrabyan
PhD in History, History Museum of Armenia

In the Middle Ages, Armenia was subjected to numerous invasions by conquerors, who turned their minted coins into an effective means of propaganda to express their territorial ambitions. The aim of the present study is to demonstrate the transformation of medieval Armenia's status as a geopolitical entity, shaped by the policies of various Muslim authorities, which is reflected in the legends of the coins. In this respect, medieval coins are an invaluable source, as they reveal the approaches of different conquerors toward Armenia's geographical names. Medieval coins are also an invaluable source for demonstrating the strategic and economic significance of various places in Armenia, as well as the approaches of different conquerors toward them.

If in the coins of the Arab Caliphate the name "Armenia" was obligatorily noted, in the Seljuk and later Mongol issues the country's name disappears, giving way to the names of individual settlements. This phenomenon is determined not so much by the Islamic factor as by the differing military-political approaches of individual authorities. During the Arab period, Armenia was perceived as a unified geopolitical entity with a defined status; however, beginning from the second half of the 11th century, the situation was changed. This was also conditioned by the complex economic situation that emerged in the East, known as the "silver crisis", which lasted until the beginning of the 13th century. The economic situation also contributed to the fragmentation of the region among large and small Muslim authorities. Armenia's territory was likewise divided among several Kurdish and Seljuk rulers, who valued their own names and titles within the complex Seljuk hierarchical system more than geographical names. On many coins, the place of minting is simply absent.

The Mongols adopted a completely different approach, for whom two titles were of particular importance: khan and sultan. The former linked them to their Mongol roots and to Chinggis Khan, while the latter represented them as the supreme authority in the Islamic world. In the Mongol coins struck in Armenia, only mints representing settlements are found — not only major cities but also smaller towns, the number of which reaches about ten. Under their rule, geographical names on coins acquired a purely administrative and economic meaning.

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻՑ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Դիաննա Միրիջանյան
Պ.գ.թ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Հայկ Հակոբյան
Պ.գ.թ., Մատենադարան,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Արման Նալբանդյան
Պ.գ.թ., Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոն
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Տիգրան Ալեքսանյան
Պ.գ.թ., Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Սպիտակ վանքը գտնվում է Վեդի խոշորացված համայնքի Լանջանիստ գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևելք: 2024-2025 թթ. վանքի տարածքում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում արձանագրվել են որոշ բացահայտումներ, որոնց շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն նորահայտ վիմագրերը: Դրանք գալիս են լրացնելու 13-րդ դարավերջի և 14-րդ դարասկզբի Այրարատ նահանգի Ուրծ և Արած գավառների վանական կյանքի մասին մեր տեղեկությունները:

Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի է, որ տվյալ տարածքները գտնվում էին Օրբելյան իշխանական տան Ջալալյան ճյուղի ներկայացուցիչների ենթակայության ներքո: Վանքի Սբ Աստվածածին եկեղեցու պատերին նույնպես պահպանվել են մի շարք արձանագրություններ, որտեղ հիշատակվում են իշխան Տարսայիճ Օրբելյանը (կառավարման տարիները՝ 1273-1290) և Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճը (1324-1331): Վերոնշյալից կարելի էր ենթադրել, որ Սպիտակ վանքը նույնպես կառուցվել է Սյունյաց իշխանների հովանավորությամբ: Սակայն Սբ Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը փաստում է, որ հոգևոր կառույցը հիմնել է ոմն Խաչատուրը՝ իր եղբոր և ընտանիքի մյուս անդամների հիշատակին: Խաչքարի վրա փորագրված այս հայտնի արձանագրությունը նոր հարցադրումների առիթ դարձավ, երբ պեղումների արդյունքում նորահայտ եկեղեցու մուտքի երկու կողմերում պահպանված վիմագրերում ևս որպես եկեղեցու կառուցող և նվիրատու հիշատակվում է միևնույն Խաչատուրը:

Հուշարձանի պատերին առկա հայտնի և նորահայտ վիմագրերն ի մի բերելով՝ փորձ ենք անելու պարզել վանական համալիրը կառուցող և նվիրատու Խաչատուրի ինքնությունն ու կապն Օրբելյան իշխանական տան հետ, ինչպես նաև լուսաբանելու ենք վանքի առօրյան ու վանական տնտեսության որոշ առանձնահատկությունները:

NEWLY DISCOVERED EPIGRAPHIC INSCRIPTIONS FROM SPITAK MONASTERY: HISTORICAL AND SOURCE-CRITICAL CONSIDERATIONS

Dianna Mirijanyan
PhD in History, Institute of Archaeology and Ethnography
Hayk Hakobyan
PhD in History, Matenadaran
Institute of Archaeology and Ethnography
Arman Nalbandyan
PhD in History, Research Center for Historical and Cultural Heritage
Institute of Archaeology and Ethnography
Tigran Aleksanyan
PhD in History, Institute of Archaeology and Ethnography

Spitak Monastery is situated approximately 2 km northeast of the village of Lanjanist, within the enlarged Vedi Municipality. Archaeological excavations conducted at the monastery complex in 2024–2025 brought to light a number of significant findings, among which the newly identified epigraphic inscriptions are of particular scholarly importance. These inscriptions provide additional primary-source evidence for the study of monastic life in the Urc and Arats districts of the historical province of Ayrarat during the late thirteenth and early fourteenth centuries.

According to the written sources, these territories were under the jurisdiction of members of the Jalalyan branch of the Orbelian princely house. A number of epigraphic records have also been preserved on the walls of the monastery's Church of St. Astvatsatsin, several of which mention Prince Tarsayich Orbelian (r. 1273–1290) and Stepanos-Tarsayich, Metropolitan of Syunik (1324–1331). These inscriptions constitute important primary evidence for reconstructing the ecclesiastical and political history of the region during the late thirteenth and early fourteenth centuries. The foregoing evidence might lead to the assumption that Spitak Monastery was likewise established under the patronage of the princes of Syunik. However, the foundation inscription of the Church of St. Astvatsatsin provides a different account, stating that the ecclesiastical foundation was established by a certain Khachatur in commemoration of his brother and other members of his family. This well-known inscription, engraved on a khachkar, acquired renewed significance in light of the results of the recent excavations. Two newly discovered inscriptions, preserved on either side of the entrance to the excavated church, likewise identify the same Khachatur as the founder and benefactor of the church. Taken together, these epigraphic testimonia provide new evidence for reassessing the circumstances of the church's foundation and the nature of its patronage.

By bringing together the previously documented and newly discovered epigraphic inscriptions preserved on the monument, this study seeks to identify Khachatur, the founder and benefactor of the monastic complex, and to investigate his relationship with the Orbelian princely house. Particular attention will also be devoted to reconstructing aspects of the monastery's institutional and everyday life, as well as to examining certain features of its economic organization, on the basis of the epigraphic evidence considered in conjunction with the archaeological record.

ՀԱՏԿԱՆՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միեր Քումունց
Բ.գ.դ., դոցենտ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Մաթիաս Ֆրից
Փ.գ.դ., պրոֆ., Բեռլինի Ազատ համալսարան

Պատմական Սյունիքը հարուստ է վիմագրական ավանդույթներով: Այստեղ հազարամյակներով ապրող հայ բնակչության շնորհիվ ձևավորվել է պատմամշակութային յուրահատուկ լանդշաֆտ: Քարերին, ժայռերին, սրբավայրերի որմերին, խաչքարերին և տապանաքարերին ամփոփված արձանագրություններն ուշագրավ տեղեկություններ են փոխանցում հայագիտության տարբեր բնագավառներին: Իբրև այդպիսին, նշելի են Սյունիքի վիմագրերում վկայված հատկանունները, որոնք ունեն բարբառային բնույթ և արժեքավոր են հատկապես միջգիտակարգային համատեքստում: Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել ինչպես «Դիվան հայ վիմագրության» պրակի համապատասխան հատորը, այնպես էլ՝ վերջին շրջանում հրապարակված (Գ. Գրիգորյան, Ա. Հարությունյան, Ս. Խորշուդյան և այլք) և մեր կողմից ուսումնասիրված նյութերը: Սյունյաց վիմագրերի հատկանունները դիտարկել ենք հիմնականում ըստ անձնանունների և տեղանունների՝ մասնավորեցնելով երկու առանցքային խնդիր.

Ա. Գորիսի «Ճգնավորի քերծ» սրբավայրի միակ գրավոր հիշատակության մեջ նշված «ՃԻԼԱՎՍ» բառն անձնանուն չէ: **Ճիլավ**-ը, ենթադրվում է, բարբառային **ճիլ** (ջիլ) արմատի բառաձևն է՝ **ճիլ-ավ-ս**:

Բ. Անգեղակոթի Սբ Ստեփանոս եկեղեցու վիմագրերից մեկում հիշատակված և արագաբանությամբ (հապլոլոգիա) ձևավորված բարբառային «ՓԱՆԻ» անվան բառաքննությամբ փորձել ենք պարզել նաև Կապանում հիշատակված **Բանիսլու-Փանիսլու** տեղանվան ծագումը: Պարսկահայքի Խոյ և Սալմաստ գավառներից ներգաղթած Փանիևների գերդաստանի հիմնադիր նահապետի՝ Փանիի անվան հետ է կապվում Հանդ-Բանիսլու տեղանունը (Ստեփան > Փանի > Փանիք > Փանիս > Փանիև > Փանսլու > Բանիսլու):

Հետազոտությունն իրականացվել է պատմահամեմատական, ստուգաբանական և բարբառագիտական մեթոդների համադրմամբ: Հատկանունների և դրանց բարբառային տարբերակների քննությունը կատարվել է Սյունիքի բարբառային տարածքի հնչյունական, բառակազմական և ձևաբանական օրինաչափությունների համատեքստում: Անձնանունների և տեղանունների (այդ թվում՝ մանրատեղանունների) ծագումնաբանական առանձնահատկությունները վերհանելիս՝ կիրառվել են ստուգաբանական մեթոդաբանության սկզբունքները, ինչը թույլ է տվել բացառել պատահական նմանություններն ու ճշգրտորեն արձանագրել անվանակոչման լեզվամշակութային շարժառիթները վիմական արձանագրություններում:

PROPER NAMES IN THE EPIGRAPHIC INSCRIPTIONS OF SYUNIK

Mher Kumunts
Dr. Habil., Associate prof., H. Acharyan Institute of Language
Matthias Fritz
Dr. Habil., Prof., Free University of Berlin

Historical Syunik is rich in epigraphic traditions, where a unique historical and cultural landscape has been shaped by the Armenian population living there continuously for millennia. As in other parts of historical Armenia, Armenian epigraphy in Syunik was formed from the very beginning with Christian content and constitutes one of the richest and most important layers of Armenian heritage. Inscriptions carved on stones, rock cliffs, tombstones, khachkars (cross-stones), and the walls of sacred buildings convey crucial information to various fields of Armenology. In this study, our focus is on the proper names used in the epigraphic inscriptions of Syunik, or lexical items deciphered as such, which possess a dialectal character and provide valuable information within an interdisciplinary context. The source materials for this research include Volume II (Fascicle 2) of the "Corpus of Armenian Epigraphy" (*Divan Hay Vimagrutyan*), as well as recently published works (Harutyunyan, Khorshudyan, et al.) and materials examined by us. While presenting the general characteristics of proper names in the epigraphs of Syunik in this report—particularly anthroponyms (proper names) and toponyms (place names)—we have also detailed two specific issues:

a. The word "CHILAVS", mentioned in the only written record of the *Tchgnavori Kerts* (Hermit's Rock) sanctuary in Goris, is not a proper name. It is presumed that ***Chilav*** is a word form derived from the dialectal root ***chil*** (*jil*): ***chil-av-s***.

b. Through the lexical examination of the dialectal name "**PHANI**"—formed by haplology (rapid speech phenomenon) and mentioned in one of the epigraphs recorded in the St. Stepanos Church of Angeghakot—we have also attempted to determine the origin of the toponym ***Banislu-Phanislu*** mentioned in Kapan. The toponym *Hand-Banislu* is associated

with the name of Phani, the founding patriarch of the Paniev extended family, who immigrated from the Khoy and Salmast provinces of Parskahayk (Persarmenia) (Stepan > Phani > Phanik' > Phanis > Paniev > Phanslu > Banislu).

The research was conducted using a comprehensive approach, combining the methods of historical-comparative, etymological, and dialectological analysis. The examination of proper names and their dialectal variants was carried out in the context of the phonetic, derivational, and morphological patterns of the Syunik dialectal area. When revealing the etymological characteristics of proper names and toponyms (including microtoponyms), the principles of etymological methodology were applied, which allowed for the exclusion of accidental resemblances and the accurate recording of the linguoculturological motives for naming in the epigraphic inscriptions.

ՈՐՈՏՆԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մաթիաս Ֆրից
Փ.գ.դ., պրոֆ., Բեռլինի Ազատ համալսարան

Որոտնավանքը, որը գտնվում է Սիսիան քաղաքից 13 կմ հարավ-արևելք՝ Որոտան գետի հովտում, կառուցվել է Ք.հ. առաջին հազարամյակի վերջին: Վանքի հնագույն եկեղեցին Սբ Ստեփանոսն է՝ կառուցված 1000 թ., իսկ երկրորդը՝ Սբ Կարապետը՝ 1006 թ.: Վանքի վիմագրերից երկուսը բավականին ընդարձակ են: Մենք ուսումնասիրել ենք ավելի հին արձանագրությունները, որոնք հին հայերենից միջին հայերենին անցման շրջանից են, որպեսզի տեսնենք՝ արդյո՞ք դրանք լեզվականորեն հաստատում են իրենց պատմական թվագրությունը:

LINGUISTIC COMMENTS ON THE INSCRIPTIONS OF VOROTNAVANK

Matthias Fritz
Dr. Habil., Prof., Free University of Berlin

The Vorotnavank Monastery, located 13 km southeast of the town of Sisian in the Vorotan River valley, was built in the end of the first millennium CE. The oldest church is St. Stephanos from the year 1000, and the second oldest is St. John the Baptist from 1006. There are a handful of building inscriptions, two of which are quite extensive. In the lecture, the older inscriptions, which are dated to the transitional period from Old Armenian to Middle Armenian, will be examined to see if they linguistically confirm their historical dating.

ՏՈԼՈՐՍԻ ՍԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻՆ. ՋՐԱՍՈՒՅԶ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒՄԸ

Դավիթ Վարդազարյան
Բ.գ.թ., անկախ հետազոտող

Վերջերս տեղեկություն (ու նաև լուսանկար) տարածվեց Տոլորսի Սբ Հռիփսիմե ջրասույզ եկեղեցու մասնակի փլուզման մասին, ինչը թեև տեղում չհաստատվեց, սակայն նորոգեց հետաքրքրությունը հուշարձանի նկատմամբ:

Տոլորսի Սբ Հռիփսիմե եկեղեցին, որն այս տարի «նշում է» իր հիմնադրման 165-ամյակը, ցայսօր համալիր չի հետազոտվել: Մինչև վերջերս կորսված էին համարվում անգամ եկեղեցու վիմագրերը, մինչդեռ դրանք հնարավոր եղավ վավերացնել ըստ Հայաստանի Ազգային արխիվից գտնված մոտ կեսդարյա համապատասխան նյութերի, որոնք կազմվել են եկեղեցին և մյուս հուշարձանները ջրամբարի տակ թողնելու թույլտվության նախապատրաստման շրջանակներում: Արխիվային հավաքածուում է պահվում նաև եկեղեցու մի բացառիկ լուսանկար:

Հետազոտությունը համադրված է նաև տոլորսցիներից ու հեղինակի ընտանիքից տարբեր ժամանակներում հավաքված նյութերով՝ հուշարձանին նվիրված պատումների պատառիկներով (այդ թվում նաև՝ խոնարհված եկեղեցուն խաչ դնելու մերօրյա դրվագով), քանի որ եկեղեցու կառուցողները ուսումնասիրության հեղինակի նախնիներն են, ինչը վավերացվում է եկեղեցու բարավորի համապատասխան հիշատակմամբ և ընտանեկան տոհմագրությամբ:

ST. HRIPSIME CHURCH OF TOLORS: THE ARCHIVAL DOCUMENTATION OF A SUNKEN MONUMENT

Davit Vardazaryan
PhD in Philology, Independent Researcher

Recently, pieces of information (as well as a photograph) on the partial collapse of the sunken St Hripsime church in Tolors village (Syunik Region, RA) circulated - this could not be positively confirmed in situ, however this renewed the interest towards this monument.

The latter, despite celebrating the 165th anniversary of its foundation in 2026, was never a subject of an all-encompassing study. Until recently even the epigraphs of the given church were consisered lost, before it became possible to verify some of them in accordance with the materials from half a century ago found at the National Archives of Armenia, written in the period of the preparation of the permisson allowing the flooding of the church and

other monuments around it, under the waters of newly built Tolors Reservoire back then. The archival collection preserved also a rare photograph of the church before its inundation.

The research is also complemented with various materials collected from the people of Tolors village and the family of the researcher with pieces of narratives (including the story of cross allocation on the delapidated church, from our times), as the ancestors of the researcher were the builders of this church, confirmed with the respective mention from the lintel of the church itself and the family genealogy.

ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔԻ ՍԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ԵՎ ՆԵՐԿԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Աշխեն Պապոյան
Որմնանկարների վերականգնման գ/հ կենտրոն

Կեչառիսի վանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի (գավթի մեջ)՝ Բարեխոսության տեսարանը ներկայացնող որմնանկարի ամրակայման և վերականգնման աշխատանքները նոր հետազոտությունների առիթ հանդիսացան:

Որմնանկարի ամրակայման և վերականգնման գիտանախագծային աշխատանքների մշակման շրջանակներում նախապես իրականացվել են վանական համալիրի հետ առնչվող արխիվային նյութերի և պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրություններ, այդ թվում նաև՝ նախկինում իրականացված վերականգնման աշխատանքների և միջամտության բնույթի վերաբերյալ տեղեկությունները:

Ինչ վերաբերում է մեր կողմից՝ 2026 թ. իրականացված որմնանկարի մաքրման և վերականգնման աշխատանքներին, ապա հարկ է նշել, որ առանձնակի ուշադրություն է դարձվել կատարման տեխնիկայի առանձնահատկություններին, հիմնածեփի և ներկաշերտի ֆիզիկաքիմիական և սպեկտրային սարքերով արված հետազոտությունների արդյունքներին, մրի և աղտոտվածության հաստ շերտից որմնանկարի մակերեսի մաքրմանը, մասնավորապես՝ նախկինում իրականացված վերականգնման աշխատանքների ընթացքում օլիֆի կիրառմանը՝ որմնանկարի վնասված մասերը քողարկելու համար: Նույն օլիֆի շերտով էր ծածկված նաև բարավորի ներքին մակերեսի կենտրոնում՝ Քրիստոսի գլխավերևում բացված «Աստծու աջի» պատկերը, որը նախկինում տեսանելի չէր:

Ոչ պակաս ուշագրավ փաստագրումներից մեկն էլ բարավորը շրջանակող քարե կամարի ներկագիր արձանագրությունն էր, որտեղ մաքրման աշխատանքներն ու ուլտրամանուշակագույն ճառագայթման սարքով արված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին ներկաշերտի պահպանված հատվածներում ընթեռնելի դարձնել բնույթով կանոնաիրավական արձանագրությունը, որը հաջողվեց նաև վերծանել ու պարզել բովանդակությունը:

RESTORATION OF THE MURAL PAINTING AND PAINTED INSCRIPTION IN THE CHURCH OF ST. GREGORY THE ILLUMINATOR AT KECHARIS MONASTERY

Ashkhen Papoyan
Research Center for the Restoration of Mural Paintings

The conservation and restoration of the mural painting depicting the Intercession scene, located on the tympanium above the western entrance to the Church of St. Gregory the Illuminator at Kecharis Monastery (within the narthex), provided an opportunity for new research.

As part of the development of the scientific and technical documentation for the conservation and restoration of the mural painting, preliminary research was conducted into archival materials and historical primary sources relating to the monastic complex, including information on previously carried out restoration work and the nature of earlier interventions.

Regarding the cleaning and restoration work carried out by our team in 2026, particular attention was paid to the technical characteristics of the painting, the results of physicochemical and spectroscopic analyses of the plaster support and paint layer, and the removal of thick deposits of soot and other contaminants from the mural surface. Special consideration was given to the use of drying oil (olifa) during previous restoration interventions to conceal damaged areas of the mural painting. The same layer of drying oil had also covered the image of the Hand of God, discovered in the center of the underside of the lintel, above Christ's head, which had previously remained invisible.

Another significant discovery was the painted inscription on the stone arch framing the lintel. Cleaning procedures and examinations conducted under ultraviolet radiation made it possible to render the preserved portions of the inscription legible. The inscription, which is of a canonical and legal nature, was subsequently deciphered, and its content was established.